



«ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ

**Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի տարածքում
կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների
վերաբերյալ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվական

Rev01

**Մշակված է
«ԷՍ ԴԻ ԷՅ ՍԻ» ՍՊԸ կողմից**

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում
կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների
վերաբերյալ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվական

Rev01

Մշակված է

«ԷՍ ԴԻ ԷՅ ՍԻ» ՍՊԸ կողմից

Փաստաթղթի մշակումը և հրապարակումը

Վարկած	Մշակված է	Ստուգված է	Ամսաթիվը	Նկարագրությունը
Rev01	Կ. Աղաբաբյան (թռչուններ) Ա. Ղազարյան (կաթնասուններ) Մ. Առաքելյան (սողուններ, երկկենցաղներ) Մ. Սարգսյան (բուսականություն)	Ա. Տեր-Թորոսյան	10.02.2025	Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների ավարտական հաշվետվություն

Բովանդակություն

1. Ներածություն.....	4
1.1 Չետագոտության տարածքը	4
2. Կաթնասուններ	4
2.1 Նմուշառման վայրեր	4
2.2 Մեթոդները.....	6
2.3 Արդյունքները.....	8
2.4 Եզրակացություններ	11
Օգտագործվող գրականություն	11
3. Թռչուններ.....	12
3.1 Չետագոտության տարածքը	12
3.2 Մեթոդները.....	14
3.3 Արդյունքները.....	14
3.4 Եզրակացություն	29
3.5 Գրականություն	29
4. Սողուններ	29
4.1 Չետագոտության տարածքը	29
4.2 Մեթոդները.....	30
4.3 Արդյունքները.....	31
4.4 Եզրակացություն	34
4.5 Գրականություն	35
5. Երկկենցաղներ.....	35
5.1 Չետագոտության տարածքը	35
5.2 Մեթոդները.....	36
5.3 Արդյունքները.....	36
5.4 Եզրակացություն	38
5.5 Գրականություն	38
6. Բույսերը	39
6.1 Չետագոտության տարածքը	39
6.2 Մեթոդները.....	39
6.3 Արդյունքները.....	44
6.4 Եզրակացություններ	56
6.5 Գրականություն	58

1. Ներածություն

Հանքավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ Ալավերդի քաղաքից 32 կմ արևելք՝ Թեղուտ գյուղի շրջակայքում: Թեղուտի հանքավայրի ամբողջ տարածքն անտառածածկ է, ինչը և նպաստում է ջրային հոսքի բնական ձևավորմանը և դրա պահպանմանը: Թեղուտի հանքավայրի անտառածածկ տարածքը հանդիսանում է Շնող գետի ջրհավաք ավազանի ջրագոյացման գոտի:

Սույն ավարտական հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացնում է տարվա չորս ժամանակաշրջաններում Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում իրականացված կենսաբազմազանության մշտադիտարկման հիմնական արդյունքները և եզրակացությունները, ներառյալ.

- հետազոտությունների մեթոդաբանությունը,
- տվյալների հավաքագրման համար իրականացված հիմնական աշխատանքները՝ հավաքագրված տվյալների տեսքով,
- հավաքագրված տվյալների վերլուծությունը և ամփոփումը:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2024 թվականի համար՝ ընդգրկելով 1 օրացուցային տարի: Հավաքագրվել են տեղադրված ֆոտոթակարդների տվյալները, ինչպես նաև իրականացվել են դիտարկումներ:

1.1 Հետազոտության տարածքը

Աղյուսակ 1. Նմուշառման վայրերը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey
TTBR_001	41.10089	44.83513	1091	Լայնատերև անտառ
TTBR_002	41.08925	44.85104	905	Լայնատերև անտառ
TTBR_003	41.10191	44.84219	892	Լայնատերև անտառ
TTBR_004	41.11526	44.82671	840	Լեռնային տափաստան, անտառային ընդգրկումներով
TTBR_005	41.10824	44.84142	905	Լայնատերև անտառ
TTBR_006	41.093611	44.849163	1001	Լայնատերև անտառ
TTBR_007	41.090928	44.814514	995	Լայնատերև անտառ
TTBR_008	41.152473	44.83073	950	Լայնատերև անտառ
Այլ				

2. Կաթնասուններ

2.1 Նմուշառման վայրեր

Ուսումնասիրվող տարածքում ֆոտոթակարդները տեղադրվել են հանքավայրի տարածքում, ինչպես նաև պոչամբարի, բաց հանքի ստորին հատվածում: Տեղադրման վայրերը նշված են [Աղյուսակ 2](#)-ում, և ներկայացված են [Նկար 1](#)-ում:

Չղջիկների և մանր կաթնասունների հետազոտությունների համար կենդանորսները և ձայնագրող սարքը տեղադրվել է Հանքի հյուրանոցից ոչ շատ հեռու՝ գետի առափնյա հատվածում: Ուսումնասիրվող տարածքում խոշոր կաթնասուններին ուսումնասիրելու համար ֆոտոթակարդները տեղադրված են եղել հանքավայրի տարածքում, ինչպես նաև պոչամբարի, բաց հանքի ստորին հատվածում:

Աղյուսակ 2. Կաթնասունների նմուշառման վայրերը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTMM_001	41.10736	44.840407	928	Կետային և Տրանսեկտային	Կլոր տարի
TTMM_007	41.109303	44.842712	943	Կետային և Տրանսեկտային	Կլոր տարի
TTMM_008	41.115219	44.826712	842	Կետային և Տրանսեկտային	Կլոր տարի
TTMM_009	41.097492	44.830817	1108	Կետային և Տրանսեկտային	Կլոր տարի
*TTMM_010	41.086887	44.85057	885	Կետային և Տրանսեկտային	Կլոր տարի

*TTMM_010՝ գարնանային հետազոտությունների ընթացքում սարքն իր տեղում չի հայտնաբերվել:

Նկար 1. Կաթնասունների նմուշառման վայրերը



2.2 Մեթոդները

Տվյալների հավաքագրում

Ֆոտոթակարդները լայնորեն ընդունված և արդյունավետ գործիք են վայրի բնության հետազոտության համար: Համարվում են ոչ ինվազիվ, ինչը թույլ է տալիս մի քանի ամսվա ընթացքում տվյալ տարածքում հանդիպող տարբեր տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալ: Լուսանկարող թակարդների կիրառումը շատ արդյունավետ է համեմատած այլ մեթոդների հետ, որոնց միջոցով կարելի է ուսումնասիրել տեսակային բազմազանությունը, բաշխվածությունը, հարաբերական առատությունն ու կենդանիների խտությունը (Paull et al., 2012; Balme et al., 2012; al., 2009; Ford et al., 2009; Silveira et al., 2003): Ժամանակակից ֆոտոթակարդների առավելությունը կայանում է նրանում, որ նրանք կարող են մնալ դաշտում երկար ժամանակով (մինչև մի քանի ամիս)՝ շարունակաբար արձանագրելով հայտնաբերումները օր ու գիշեր՝ նվազագույն մարդկային միջամտությամբ: Սույն ուսումնասիրության նպատակների համար ֆոտոթակարդները տեղադրվել են 2024 թվականի հունվարի 15-ին և հավաքվել են 2025թ-ի հունվարի 16-ին, աշխատելով 1 օրացուցային տարի: Թակարդների տեղադրման վայրերն ընտրվել են ըստ կենդանիների կենսական հետքերի, ինչպիսիք են ոտնահետքերը և արտաթորանքի առկայությունը (**Նկար 2**):

Նկար 2. Կաթնասունների հետքերը և ֆոտոթակարդների տեղադրումը




Աքիսի հետքեր



Կրծողի հետքեր



Լուսանկարող թակարդը հանքավայրում



Դաշտային աշխատանքներ

Գարնանային հետազոտությունների ընթացքում հավաքագրվել են 4 ֆոտոթակարդների տվյալները, որոնց վերլուծությունների հիման վրա 001 համարի ֆոտոթակարդը տեղափոխվել է հանքավայրի պահեստների հետևամասում տեղակայված անտառամերձ տարածք: 010 համարի թակարդը հանվել է հետազոտություններից: Աշնանը հետազոտություններից դուրս է բերվել նաև հանքավայրի պահեստների հետևամասում տեղադրված ֆոտոթակարդը: Հիմնական տվյալները գրանցվել են 3 թակարդների աշխատանքների արդյունքում:

Մանր կաթնասուններ

Մանր կաթնասունների ուսումնասիրության համար տեղադրվել են Շերման տիպի կենդանոսեր: Թակարդները տեղադրվել են գարնանը, ամռանը և աշնանը 1 գիշեր տևաողությամբ : Տեղադրման վայրերը նշված են **Նկար 3**-ում:

Նկար 3. Մանր կաթնասունների ուսումնասիրման տեղամասերը



Չղջիկներ

Չղջիկների ուսումնասիրման համար օգտագործվել է ուլտրաձայների ձայնագրման մեթոդը: Հանքի տարածքում հունիսի 10-ին, օգոստոսի 17-ին և հոկտեմբերի 8-ին տեղադրվել է Batlogger C ստացիոնար սարքը, որը մեկ գիշեր անըդմեջ իրականացրել է ուլտրաձայների ձայնագրություններ (**Նկար 4**): Ձայնագրությունները սկսվել են 19:30 և ավարտվել առավոտյան 6:00-ին: Սարքը տեղադրվել է գետի առափնյա հատվածում, որտեղ սաղորդանալ ջրի հոսք է եղել և փոքր լճակ: Ստացված տվյալները / ձայնագրությունները վերլուծվել են Bat Explorer ծրագրի միջոցով:

Նկար 4. Ուլտրաձայներ գրանցող սարքը Թեղուտի հանքում



Batlogger C ձայնագրող սարքի բարձրախոտը



Batlogger C ուլտրաձայներ գրանցող սարք

2.3 Արդյունքները

Մանր կաթնասուններ

Գարնանը տեղադրված են եղել 10 թակարդներ, որոնցից աշխատել է 1 թակարդը: Բռնվել է միայն մեկ՝ փոքր անտառային մուկ *Apodemus uralensis*: Ամռանը տեղադրված 20 թակարդներից աշխատել է 3 թակարդը: Կենդանորսները տեղադրված են եղել հանքի սկզբնամասում գետի առափնյա հատվածներում: Նկատվել են նաև մեծ քանակությամբ կրծողների բներ, սակայն դրանք հիմնականում եղել են չգործող: Դեպի բացահանք տանող ճանապարհի աջակողմյան մասում բռնվել է տափաստանային անտառամուկ *Apodemus wytherbi*: Իսկ թակարդի կողքին մեր կողմից գրացվել է անատառային քսամուկ *Dryomis nitedula*:

Աղյուսակ 3. Մանր կաթնասուններ գրանցված ֆոտոթակարդների կողմից

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2
1	Փոքր անտառամուկ	<i>Apodemus uralensis</i>	2	
2	Տափաստանային անտառամուկ	<i>Apodemus wytherbi</i>		1
3	Անտառային քսամուկ	<i>Dryomis nitedula</i>		1
Ընդամենը			2	2

Աշխատանքը տեղադրվել է 20 թակարդներ, սակայն ոչ մեկը չի աշխատել: Ներկայացված տվյալները խոսում են տարածքում մանր կրծողների և միջատակերների ոչ խիտ պոպուլյացիայի մասին: Դա կարող է պատճառ լինել տարածքում շնագայլերի և աղվեսների բավարար քանակի, ինչի մասին կարող են նաև վկայել խոշոր կաթնասունների մեր հետազոտության արդյունքները, ինչպես նաև պոպուլյացիոն ալիքների պատճառ հանդիսանալ, սակայն հաստատել հնարավոր կլինի միայն հաջորդ տարիների հետազոտության արդյունքում: Ձմռան ամիսներին ֆաբրիկայի տարածքին հարակից տեղամասերում գրանցվել են տարբեր կրծողների ոտնաքգետքեր: 2024 թ.-ի ձմռանը լուսանկարող թակարդների տեղադրման ժամանակ կենդանիներ չեն նկատվել, սակայն մեր կողմից գրանցվել են աքիսի (*Mistela nivalis*) և կրծողների հետքեր:

Աղյուսակ 4. Դիտարկված կաթնասունները, 1,2,3,4,5 համապատասխանում են TTMM_001, TTMM_007, TTMM_008, TTMM_009, TTMM_010 վայրերին; Օ համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը:

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	Օ	Ամսաթիվը
1	Զարակզաքիս	<i>Matres foina</i>				1			15.01.2024
2	Աքիս	<i>Mustela nivalis</i>				1			15.01.2024
3	Անտառամկներ	<i>Apodemus sp</i>		2		1			15.01.2024
Ընդամենը				2		3			

Չոքիկներ

Batlogger C ստացիոնար սարքի օգնությամբ հունիս ամսվա մեկ գիշերվա ընթացքում ձայնագրվել է 2763 ուլտրաձայն: Արդյունքների վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ այդ տարածքում հունիսի 10-ին սարքի կողմից գրանցվել է թզուկ փոքրաչոջիկ *Pipistrellus pipistrellus*, անտառային փոքրաչոջիկ *Pipistrellus nathusi*, փոքր իրիկնաչոջիկ *Nyctalus leislersi*, ինչպես նաև եռագույն գիշերաչոջիկ *Myotis emarginatus*, սրականջ գիշերաչոջիկ *Myotis blythi* և Դավիդիի գիշերաչոջիկ *Myotis davidii*: Վերջին երեք տեսակների ձայները շատ նման են մնացած գիշերաչոջիկների ձայներին, որոնք բավականին դժվար են նույնականացվել: Օգոստոս ամսին մեկ գիշերվա ընթացքում ձայնագրվել է 3125 ուլտրաձայն:

Արդյունքների վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ այդ տարածքում օգոստոսի 17-ին սարքի կողմից գրանցվել է թզուկ փոքրաչոջիկ *Pipistrellus pipistrellus*, գաճաճ փոքրաչոջիկ *Pipistrellus pygmaeus*, անտառային փոքրաչոջիկ *Pipistrellus nathusi*, միջերկրածովյան փոքրաչոջիկ *Pipistrellus kuhli*, փոքր իրիկնաչոջիկ *Nyctalus leislersi*, ինչպես նաև եռագույն գիշերաչոջիկ *Myotis emarginatus*, սրականջ գիշերաչոջիկ *Myotis blythi* և Դավիդիի գիշերաչոջիկ *Myotis davidii*: Գրանցվել է նաև անտառային Էկոհամակարգին բնորոշ եվրոպական լայնականջ *Barbastella barbastellus*: Ակտիվությունը օգոստոս ամսին եղել է բավականին բարձր: Յուրաքանչյուր ամսին սարքը տեղադրված է եղել հյուրանոցային համալիրին կից տարածքում: Գրանցվել է ընդամենը 894 ձայն, որոնք էլ հիմնականում եղել են թզուկ փոքրաչոջիկ *Pipistrellus pipistrellus*, Միջերկրածովյան փոքրաչոջիկ *Pipistrellus kuhli* և գիշերաչոջիկներ: Յուրաքանչյուր ամսին ակտիվությունը բացատրվում է ձմռանը ակտիվության հիբերնացիայի պատրաստվելու հանգամանքով:

խոշոր կաթնասուններ

Ֆոտոթակարդների կողմից գարնանը գրանցվել է աքիս (*Mustela nivalis*), քարակզաքիսի (*Matres foina*), շնագայլ (*Canis aureus*), գայլ (*Canis lupus*), աղվես (*Vulpes vulpes*), ինչպես նաև անտառային կատու (*Felis silvestris*): Նապաստականմաններից գրանցվել է եվրոպական նապաստակը: Նշենք, որ 4 ֆոտոթակարդներից 3-ը գարնան ամիսներին գրանցել են նապաստակներ, ուստի կարելի է եզրակացնել, որ նրանց պոպուլյացիան բավականին լավ վիճակում է գտնվում հանքի տարածքում: Ֆոտոթակարդներից միայն մեկն է գրանցել այժմ: Վերջինիս դիտվել է նաև հանքի աշխատակիցների կողմից:

Նկար 5. Կաթնասուններ գրանցված ֆոտոթակարդների կողմից



Սովորական շնագայլ



Եվրոպական նապաստակ

Ֆոտոթակարդների և թակարդների կողմից հունիսից-օգոստոս ամիսների ընթացքում գրանցվել են հետևյալ կաթնասունները՝

Աղյուսակ 5. Հունիս-օգոստոս ամիսներին գրանցված կաթնասունների տեսակները

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	Ամսաթիվը
1	Եվրոպական նապաստակ	<i>Lepus europeus</i>		2			30.07.2024
2	Անտառային կատու	<i>Felis sylvestris</i>		1			16.06.2024
3	Շնագայլ	<i>Canis aureus</i>		1	1		16.06.2024 - 29.07.2024
4	Գորշ գայլ	<i>Canis lupus</i>		1	1		16.06.2024 - 29.07.2024
5	Այծյամ	<i>Capreolus capreolus</i>				2	23.06.2024 - 29.07.2024
Ընդամենը			0	5	2	2	

Պահեստների հետևամասում արվել է 104 նկար, որոնք հիմնականում ստվերի նկարներ են: Սակայն նաև կան գիշերը արված նկարներ: Հավանաբար կենդանի է անցել, սակայն կադրում չի երևում: Ֆոտոթակարդի բարձրությունն ու ուղղվածությունը փոխվել է: Անտառային հատվածում տեղադրված լուսանկարող թակարդը նկարել է արու և եգ եղևիկների: Մատուռի մոտ տեղադրված լուսանկարող թակարդը արդեն երկրորդ անգամ գրանցում է անտառակատու (Նկար 6):

Նկար 6. Կաթնասուններ գրանցված ֆոտոթակարդների կողմից



Այծյամ



Անտառային կատու

Աշնան և ձմռան ամիսներին ֆաբրիկայի հետևամասում տեղադրված և ամռան ընթացքում այծյամներ գրանցած ֆոտոթակարդը, այծյամներ չի նկարել: Դա խոսում է այն մասին, որ այծյամները այդ տարածքում լինում են տաք ժամանակահատվածում, իսկ արդեն ձմռան եղանակին տեղափոխվում են այլ վայրեր: Նշենք, որ շնագայլերը ոչ միայն գրանցվել են ֆոտոթակարդների կողմից, այլ նաև դիտարկումների ժամանակ: Ամռան ու աշնան ամիսներին

շնագայլերի խմբերը ժամը 19:00-ից հետո գրանցվել են հանքի տարբեր հատվածներում, բացի այդ լսելի են եղել տարբեր խմբերի ձայները: Հետազոտությունների արդյունքում գրանցվել է 3 կարգերի ներկայացուցիչներ (**Աղյուսակ 6**)`

Աղյուսակ 6. Հետազոտությունների արդյունքում գրանցված կարգերի ներկայացուցիչները

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	Գրանցված տեսակների քանակը
1	Նապաստականմաններ	<i>Lagomoprha</i>	1
2	Գիշատիչներ	<i>Carnivores</i>	4
3	Կճղակավորներ	<i>Ceratodactylia</i>	1
Ընդամենը			6

2.4 Եզրակացություններ

- 1) 2024թ.-ի մշտադիտարկումների ժամանակ մեր կողմից չեն գրանցվել միջատակերներ, սակայն, գրանցվել են ձեռքաթևավորների, կրծողների, նապաստականմանների, գիշատիչների և կճղակավորների կարգերի ներկայացուցիչներ:
- 2) Նախորդ տարիներին կատարված հետազոտությունների դիտակետերը կամ նմուշառման վայրերը նշված չեն, որի պատճառով հնարավոր չէ իրականացնել համեմատություններ տեսակային կազմի կամ բաշխվածության վերաբերյալ: Մեր կողմից տրված տվյալները կարող են հիմք հանդիսանալ հետագա մշտադիտարկումների համար:
- 3) Նախորդ տարիների արդյունքներում ձեռքաթևավորների վերաբերյալ որևէ տվյալ չի ներկայացվել: Նախորդ տարիների հետազոտություններում նշված է լուսան, որի վերաբերյալ մենք տվյալներ չենք ստացել: Մեր կողմից մեկ տարվա հետազոտության արդյունքներում նշված դիտակետերում չեն գրանցվել գորշ արջի հետքեր:
- 4) Կաթնասունների վրա հիմնականում մեծ ազդեցություն ունեն պայթեցումները, որի արդյունքում բացահանքի հարակից տարածքում խոշոր կենդանիներ չեն գրանցվել:
- 5) Առաջարկվում է բացահանքին հարակից տարածքում տեղադրել փոքր ցանկապատ որը արգելք կհանդիսանա որոշ կենդանիների բացահանք մուտք գործելուն և դրանով անցնելուն:

Օգտագործվող գրականություն

1. Silveira L, Jácomo ATA, Diniz-Filho JAF. 2003 Camera trap, line transect census and track surveys: a comparative evaluation. Biol. Conserv. 114, 351-355. (doi:10.1016/S0006-3207(03)00063-6).
2. Paull DJ, Claridge AW, Cunningham RB. 2012 Effective detection methods for medium-sized ground-dwelling mammals: a comparison between infrared digital cameras and hair tunnels. Wildl. Res. 39, 546-553. (doi:10.1071/WR12034).
3. Ford AT, Clevenger AP, Bennett A. 2009 Comparison of methods of monitoring wildlife crossing-structures on highways. J. Wildl. Manage. 73, 1213-1222. (doi:10.2193/2008-387).
4. Balme GA, Hunter LTB, Slotow R. 2009 Evaluating methods for counting cryptic carnivores. J. Wildl. Manage. 73, 433-441. (doi:10.2193/2007-368).
5. Si X., Kays, R. & Ding, P. (2014) How long is enough to detect terrestrial animals? Estimating the minimum trapping effort on camera traps. PeerJ, 2, e374.

3. Թռչուններ


3.1 Հետազոտության տարածքը

Որոշվել են տվյալների հավաքագրման հետևյալ կետերը (տես ստորև ներկայացված արյունակներն ու քարտեզները): Բացի այդ, ողջ տարածքում կատարվել են դիտարկումներ ըստ պատահաբար հնարավորությունների, տարածքով անցնելու ընթացքում:

Աղյուսակ 7. Թռչունների նմուշառման վայրերը ձմռանը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Կետային և Տրանսեկտային	Ձմեռող
TTBR_002	41.08925	44.85104	905	Կետային և Տրանսեկտային	Ձմեռող
TTBR_003	41.10191	44.84219	892	Կետային և Տրանսեկտային	Ձմեռող
TTBR_004	41.11526	44.82671	840	Կետային և Տրանսեկտային	Ձմեռող

Նկար 7. Թռչունների նմուշառման վայրերը ձմռանը




Աղյուսակ 8. Թռչունների նմուշառման վայրերը գարնանային հետազոտությունների ընթացքում

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Կետային և Տրանսեկտային	Բնադրող

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_002	41.08925	44.85104	905	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_003	41.10191	44.84219	892	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_004	41.11526	44.82671	840	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_005	41.10824	44.84142	905	Կետային և Տրանսեկտային	Բնադրող


Նկար 8. Թռչունների նմուշառման վայրերը գարնանը



Աղյուսակ 9. Թռչունների նմուշառման վայրերը ամռանը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_002	41.08925	44.85104	905	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_003	41.10191	44.84219	892	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_004	41.11526	44.82671	840	Կետային և Տրանսեկտային	Բնադրող
TTBR_005	41.10824	44.84142	905	Կետային և Տրանսեկտային	Բնադրող

Նկար 9. Թռչունների նմուշառման վայրերը ամռանը



3.2 Մեթոդները

Թռչունների տեսակների բազմազանությունը և առատությունը հետազոտելու համար օգտագործվել են կետային և տրանսեկտային հաշվարկներ: Կետերից յուրաքանչյուրում մենք ծախսում էինք 30 րոպե՝ նշելով տեսած և լսված բոլոր թռչուններին: Այնուհետև մենք կատարեցինք տրանսեկտային հաշվարկներ 1 կմ երթուղիների համար, քայլելով դանդաղ տեմպով և նշելով 200 մ հեռավորության վրա տեսած և լսված բոլոր թռչուններին: Աշխատանքներն իրականացվել են ձմռանը՝ 25.12.2023թ. և 14.12.2024թ. ժամը 10:00-16:00, գարնանը՝ 4.03.2024թ. և 11.06.2024թ. ժամը 9:00-15:00, ամռանը՝ 26.07.2024 թ. և 08.08.2024 թ. ժամը 10:00-18:00:

3.3 Արդյունքները

Ձմռանն իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է 27 տեսակի 359 առանձնյակ (տես [Աղյուսակ 10-ը](#), ա և բ):

Աղյուսակ 10. Դիտարկված թռչունները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին, Օ համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը:

ա)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	Օ	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Լորաճուռակ	Accipiter nisus				1			25.12.23	Լորաճուռակ
2	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus					1		25.12.23	Տափաստանային ճուռակ
3	Լեռնային խաղտոտնիկ	Motacilla cinerea						1	25.12.23	Լեռնային խաղտոտնիկ
4	Ջրաճնճղուկ	Cinclus cinclus						1	25.12.23	Ջրաճնճղուկ

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
5	Եղնջաթռչնակ	Troglodytes troglodytes			1				25.12.23	Եղնջաթռչնակ
6	Սև կեռնեխ	Turdus merula	1	3	1	4	2	5	25.12.23	Սև կեռնեխ
7	Արշալուսիկ	Erithacus rubecula				1			25.12.23	Արշալուսիկ
8	Սևուկ կարմրատուտ	Phoenicurus ochruros				1			25.12.23	Սևուկ կարմրատուտ
9	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus	1		1			1	25.12.23	Երկնագույն երաշտահավ
10	Մեծ երաշտահավ	Parus major	2	4	2	3	3	10	25.12.23	Մեծ երաշտահավ
11	Սովորական սիտեղ	Sitta europaea	2						25.12.23	Սովորական սիտեղ
12	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	2	4	2	5	6	10	25.12.23	Անտառային կաչաղակ
13	Սովորական կաչաղակ	Pica pica		3		2	3	8	25.12.23	Սովորական կաչաղակ
14	Մոխրագույն ագռավ	Corvus corone		2		2	4	6	25.12.23	Մոխրագույն ագռավ
15	Սև ագռավ	Corvus corax		1		1	1	1	25.12.23	Սև ագռավ
16	Տնային ճնճղուկ	Passer domesticus					3	15	25.12.23	Տնային ճնճղուկ
17	Դաշտային ճնճղուկ	Passer montanus						5	25.12.23	Դաշտային ճնճղուկ
18	Ամուրիկ	Fringilla coelebs	3	5	2	6	4	10	25.12.23	Ամուրիկ
19	Սովորական սերինոս	Fringilla montifringilla						14	25.12.23	Սովորական սերինոս
20	Կարմրաճակատ սերինոս	Serinus pusillus						4	25.12.23	Կարմրաճակատ սերինոս
21	Կարմրակատար	Carduelis carduelis						3	25.12.23	Կարմրակատար
22	Ազնվասարեկ	Spinus spinus						2	25.12.23	Ազնվասարեկ
23	Հատրեկիչ	Coccothraustes coccothraustes				2			25.12.23	Հատրեկիչ
24	Սովորական դրախտապան	Emberiza citrinella				4	3		25.12.23	Սովորական դրախտապան
25	Կորեկնուկ	Emberiza calandra						3	25.12.23	Կորեկնուկ
Ընդամենը			11	22	9	32	30	99		

b)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Մեծ ճուռակ	Buteo buteo	1		1				14-Jan-24	Մեծ ճուռակ
2	Եղնջաթռչնակ	Troglodytes troglodytes				1			14-Jan-24	Եղնջաթռչնակ
3	Սև կեռնեխ	Turdus merula		2	2	4	3	7	14-Jan-24	Սև կեռնեխ
4	Արշալուսիկ	Erithacus rubecula						1	14-Jan-24	Արշալուսիկ

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
5	Սևուկ կարմրատուտ	Phoenicurus ochruros						1	14-Jan-24	Սևուկ կարմրատուտ
6	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus				2	2	1	14-Jan-24	Երկնագույն երաշտահավ
7	Մեծ երաշտահավ	Parus major	3	2	4	2	3	5	14-Jan-24	Մեծ երաշտահավ
8	Սովորական սիտեղ	Sitta europaea	6		1				14-Jan-24	Սովորական սիտեղ
9	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	1	4	2	2	6	8	14-Jan-24	Անտառային կաչաղակ
10	Սովորական կաչաղակ	Pica pica		1		2	3	6	14-Jan-24	Սովորական կաչաղակ
11	Մոխրագույն ագռավ	Corvus corone		2		3	1	4	14-Jan-24	Մոխրագույն ագռավ
12	Սև ագռավ	Corvus corax					1	2	14-Jan-24	Սև ագռավ
13	Տնային ճնճողկ	Passer domesticus						10	14-Jan-24	Տնային ճնճողկ
14	Դաշտային ճնճողկ	Passer montanus						2	14-Jan-24	Դաշտային ճնճողկ
15	Ամուրիկ	Fringilla coelebs	2	5	1	3	6	7	14-Jan-24	Ամուրիկ
16	Սովորական սերինոս	Fringilla montifringilla					2	4	14-Jan-24	Սովորական սերինոս
17	Կարմրակատար	Carduelis carduelis						4	14-Jan-24	Կարմրակատար
18	Հատրեկիչ	Coccothraustes coccothraustes				2			14-Jan-24	Հատրեկիչ
19	Սովորական դրախտապան	Emberiza citrinella						2	14-Jan-24	Սովորական դրախտապան
20	Լեռնային դրախտապան	Emberiza cia					2		14-Jan-24	Լեռնային դրախտապան
21	Կորեկնուկ	Emberiza calandra						2	14-Jan-24	Կորեկնուկ
22	Մեծ ճուռակ	Buteo buteo	1		1				14-Jan-24	Մեծ ճուռակ
ԸՆդամենը			13	16	11	21	29	66		

Դիտարկված տեսակների մեջ առաջնահերթ տեսակներից ոչ մեկը չի գրանցվել, սակայն մենք նկատեցինք սև փայտփորի Dryocopus martius-ի հետքերը (**Նկար 10**): Հաշվի առնելով հետքերի բավականին թարմ բնույթը՝ տեսակը, ամենայն հավանականությամբ, բնադրում է տարածքում: Հետևաբար, կարևոր է բացահայտել տեսակի բնադրման տարածքը՝ դրա պաշտպանությունն ապահովելու համար:

Նկար 10. Traces of Black Woodpecker Dryocopus martius



Գարնանն իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է 52 տեսակի 741 առանձնյակ (տես Աղյուսակ 10):

Աղյուսակ 11. Դիտարկված թռչունները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

ա)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus					1	1	04.03.24	
2	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus						1	04.03.24	
3	Սովորական սարյակ	Sturnus vulgaris						25	04.03.24	
4	Ջրաճնճող	Cinclus cinclus		1					04.03.24	
5	Եղնջաթռչնակ	Troglodytes troglodytes	1		1			1	04.03.24	
6	Սև կեռնեխ	Turdus merula	3	5	2	3	3	2	04.03.24	
7	Արշալուսիկ	Erithacus rubecula	1					1	04.03.24	

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
8	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus	2	2	1	1	1	1	04.03.24	
9	Մեծ երաշտահավ	Parus major	3	2	2	2	2	5	04.03.24	
10	Սովորական սիտեղ	Sitta europaea		1		2		1	04.03.24	
11	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	3	4	1	1	1	5	04.03.24	
12	Սովորական կաչաղակ	Pica pica		3		2	3	1	04.03.24	
13	Մոխրագույն ագռավ	Corvus corone	1		3				04.03.24	
14	Սև ագռավ	Corvus corax			2			3	04.03.24	
15	Տնային ճնճողկ	Passer domesticus					4		04.03.24	
16	Դաշտային ճնճողկ	Passer montanus			7			5	04.03.24	
17	Ամուրիկ	Fringilla coelebs	2	3	2	9	5	6	04.03.24	
18	Կարմրակատար	Carduelis carduelis	2						04.03.24	
19	Հատրեկիչ	Coccothraustes coccothraustes	1	2		2		1	04.03.24	
20	Խայտաբղետ փայտփոր	Dendrocopos major					2		04.03.24	
21	Կանաչ փայտփոր	Picus viridis					1		04.03.24	
Ընդամենը			19	23	21	22	23	59		

բ)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	0	4	5	6	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus				1		1	11.06.24	
2	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus				2	2		11.06.24	
3	Սպիտակագլուխ անգղ	Gyps fulvus						1	11.06.24	
4	Սովորական սարյակ	Sturnus vulgaris				15			11.06.24	
5	Զրաճնճողկ	Cinclus cinclus				1			11.06.24	
6	Եղնջաթռչնակ	Troglodytes troglodytes	2	2					11.06.24	
7	Սև կեռնեխ	Turdus merula	7	6	10	3	5		11.06.24	
8	Արշալուսիկ	Erithacus rubecula	2	1	1				11.06.24	
9	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus	4	3	1	2	1	2	11.06.24	
10	Մեծ երաշտահավ	Parus major	7	5	3	5	3	1	11.06.24	
11	Սև երաշտահավ	Parus ater	5	3				2	11.06.24	
12	Փոքր քարոք	Charadrius dubius				1			11.06.24	

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	0	4	5	6	Ամսաթիվը	Մեկնաբանություն
13	Սովորական կկու	Cuculus canorus	2	1	1	1			11.06.24	
14	Անտառային աղավնի	Columba palumbus		2				1	11.06.24	
15	Սև մանգաղաթև	Apus apus		7	100	13	8	10	11.06.24	
16	Առափնյա ծիծեռնակ	Riparia riparia			20				11.06.24	
17	Քաղաքային ծիծեռնակ	Delichon urbica			30	4	6		11.06.24	
18	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster			15	6	10	2	11.06.24	
19	Հոպոպ	Upupa epops			2				11.06.24	
20	Սև փայտփոր	Dryocopus martius						1	11.06.24	
21	Մեծ փայտփոր	Dendrocopos major	1	1					11.06.24	
22	Փոքր փայտփոր	Dendrocopos minor	1						11.06.24	
23	Լեռնային խաղտունիկ	Motacilla cinerea			1				11.06.24	
24	Սպիտակ խաղտունիկ	Motacilla alba		1	12	2	1	3	11.06.24	
25	Ժուլան	Lanius collurio		3	10	7	6		11.06.24	
26	Պիրոլ	Oriolus oriolus			1				11.06.24	
27	Սովորական կարմրատուտ	Phoenicurus phoenicurus	2	2				1	11.06.24	
28	Մոխրագույն ճանճորս	Muscicapa striata	1	1					11.06.24	
29	Փոքր ճանճորս	Ficedula parva	3					1	11.06.24	
30	Կիսասպիտակավիզ ճանճորս	Ficedula semitorquata	1					1	11.06.24	
31	Երգող կեռնեխ	Turdus philomelos	3	1					11.06.24	
32	Ծնկլտան գեղգեղիկ	Phylloscopus collybita	4	3		1		1	11.06.24	
33	Կանաչ գեղգեղիկ	Phylloscopus nitidus	5	3		1			11.06.24	
34	Սևագլուխ շահրիկ	Sylvia atricapilla		2	2	1		1	11.06.24	
35	Կորեկնուկ	Miliaria calandra			10	2			11.06.24	
36	Սևագլուխ դրախտապան	Emberiza melanocephala			3	2	1		11.06.24	
37	Սովորական սիտեղ	Sitta europaea	4	2					11.06.24	
38	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius		2	2	1			11.06.24	
39	Սովորական կաչաղակ	Pica pica			10		2		11.06.24	
40	Մոխրագույն ագռավ	Corvus corone			13	1		2	11.06.24	
41	Սև ագռավ	Corvus corax				1		1	11.06.24	
42	Տնային ճնճողուկ	Passer domesticus			30				11.06.24	

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	0	4	5	6	Ամսաթիվը	Մեկնաբանություն
43	Դաշտային ճնճողկ	Passer montanus			6			1	11.06.24	
44	Ամուրիկ	Fringilla coelebs	6	5	3			2	11.06.24	
45	Կարմրակատար	Carduelis carduelis		2	2	3			11.06.24	
46	Հատրեկիչ	Coccothraustes coccothraustes		1			1		11.06.24	
47	Կանաչ սերինսու	Carduelis chloris	1	1	1	2			11.06.24	
48	Մոխրագույն շահրիկ	Sylvia communis		1				2	11.06.24	
49	Սովորական ոսպնուկ	Carpodacus erythrinus	2						11.06.24	
Ընդամենը			63	61	306	61	46	37		

Ամռանն իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է 50 տեսակի 656 առանձնյակ (տես [Աղյուսակ 12](#), ա և բ):

Աղյուսակ 12. Դիտարկված թռչունները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը:

ա)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	4	5	6	7	8	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus			1			2	26.07.24	
2	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus	1						26.07.24	
3	Սպիտակագլուխ անգղ	Gyps fulvus						2	26.07.24	
4	Սովորական սարյակ	Sturnus vulgaris						3	26.07.24	
5	Ջրաճնճողկ	Cinclus cinclus						1	26.07.24	
6	Սև կեռնեխ	Turdus merula	1		3				26.07.24	
7	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus	1						26.07.24	
8	Մեծ երաշտահավ	Parus major	3	5	2				26.07.24	
9	Փոքր քարոյր	Charadrius dubius	2						26.07.24	
10	Սև մանգաղաթև	Apus apus						10	26.07.24	
11	Առափնյա ծիծեռնակ	Riparia riparia						3	26.07.24	
12	Քաղաքային ծիծեռնակ	Delichon urbica	3					10	26.07.24	
13	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster	3	1				15	26.07.24	
14	Լեռնային խաղտունիկ	Motacilla cinerea						2	26.07.24	
15	Սպիտակ խաղտունիկ	Motacilla alba			3			1	26.07.24	

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	4	5	6	7	8	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
16	Ժուլան	Lanius collurio	11					5	26.07.24	
17	Սովորական կարմրատուռ	Phoenicurus phoenicurus			1				26.07.24	
18	Կորեկուկ	Miliaria calandra	1					2	26.07.24	
19	Սևագլուխ դրախտապան	Emberiza melanocephala	5					2	26.07.24	
20	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	1	1					26.07.24	
21	Սովորական կաչաղակ	Pica pica	1					4	26.07.24	
22	Մոխրագույն ագռավ	Corvus corone						5	26.07.24	
23	Սև ագռավ	Corvus corax						3	26.07.24	
24	Տնային ճնճողուկ	Passer domesticus						25	26.07.24	
25	Դաշտային ճնճողուկ	Passer montanus						10	26.07.24	
26	Ամուրիկ	Fringilla coelebs						1	26.07.24	
27	Կարմրակատար	Carduelis carduelis						7	26.07.24	
28	Կանաչ սերինոս	Carduelis chloris	3	2	1			5	26.07.24	
29	Մոխրագույն շահրիկ	Sylvia communis	1						26.07.24	
30	Գառնանգղ	Gypaetus barbatus						2	26.07.24	
31	Խայտաբղետ փայտփոր	Dendrocopos major			1				26.07.24	
Ընդամենը			37	9	12	0	0	120		

բ)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	8	0	Ամսաթիվը
1	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus		2	1	1					1	08.08.24
2	Լորաճուռակ	Accipiter nisus					1			1	3	08.08.24
3	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus		1	1	2				2	7	08.08.24
4	Սպիտակագլուխ անգղ	Gyps fulvus				1	1			1	1	08.08.24
5	Գառնանգղ	Gypaetus barbatus							1			08.08.24
6	Գաճաճ արծիվ	Aquila pennata								2		08.08.24
7	Սովորական սարյակ	Sturnus vulgaris									10	08.08.24
8	Ջրաճնճողուկ	Cinclus cinclus								1	2	08.08.24
9	Եղնջաթռչնակ	Troglodytes troglodytes	1	1					7	1		08.08.24
10	Սև կեռնեխ	Turdus merula		3			1	2	10	2	15	08.08.24
11	Արշալուսիկ	Erithacus rubecula	1	1	1				3			08.08.24
12	Երկնագույն երաշտահավ	Cyanistes caeruleus	2					1	5			08.08.24
13	Մեծ երաշտահավ	Parus major	3	1	2	4	1	2	10		5	08.08.24
14	Սև երաշտահավ		10						1			08.08.24

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	8	0	Ամսաթիվը
15	Փոքր ճանճորս	Ficedula parva	2						1			08.08.24
16	Մեծ ճուռակ	Buteo buteo									2	08.08.24
17	աղավնի՞?								1			08.08.24
18	Սովորական կկու	Cuculus canorus	1								1	08.08.24
19	Անտառային աղավնի	Columba palumbus							3			08.08.24
20	Քաղաքային ծիծեռնակ	Delichon urbica					3	4	5			08.08.24
21	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster		3		15	1	3	7	5	10	08.08.24
22	Սև փայտփոր	Dryocopus martius	1									08.08.24
23	Միջին փայտփոր	Dendrocopos medius			1							08.08.24
24	Լեռնային խաղտտնիկ	Motacilla cinerea							3	1	2	08.08.24
25	Սպիտակ խաղտտնիկ	Motacilla alba		3				1	2	1	10	08.08.24
26	Ժուլան	Lanius collurio				7	4		2		8	08.08.24
27	Պիրոլ	Oriolus oriolus								7		08.08.24
28	Սովորական կարմրատուտ	Phoenicurus phoenicurus						2			3	08.08.24
29	Երգող կեռնեխ	Turdus philomelos	3	1					2			08.08.24
30	Ծնկլտան գեղգեղիկ	Phylloscopus collybita	1									08.08.24
31	Սևագլուխ շահրիկ	Sylvia atricapilla	1									08.08.24
32	Մոխրագույն ճանճորս	Muscicapa striata	1									08.08.24
33	Կանաչ գեղգեղիկ	Phylloscopus nitidus	1						1			08.08.24
34	Սևագլուխ դրախտապան	Emberiza melanocephala		2		5			2		3	08.08.24
35	Սովորական սիտեղ	Sitta europaea		1					3			08.08.24
36	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	2	1	1	3			2			08.08.24
37	Սովորական կաչաղակ	Pica pica								3	6	08.08.24
38	Մոխրագույն ագռավ	Corvus corone		4		1			2	5		08.08.24
39	Սև ագռավ	Corvus corax	1			2			1	1	3	08.08.24
40	Տնային ճնճողուկ	Passer domesticus								15	50	08.08.24
41	Դաշտային ճնճողուկ	Passer montanus								6	20	08.08.24
42	Ամուրիկ	Fringilla coelebs	3			1			2		6	08.08.24
43	Կարմրակատար	Carduelis carduelis				3				4	12	08.08.24
44	Յատրեկիչ	Coccothraustes coccothraustes							2			08.08.24
45	Կանաչ սերինոս	Carduelis chloris	1	2		1		1	4	2	3	08.08.24
46	Մոխրագույն շահրիկ	Sylvia communis				4						08.08.24
47	Քարակաքավ	Alectoris chukar							2		1	08.08.24
48	Խայտաբղետ փայտփոր	Dendrocopos major	1		1				1		1	08.08.24
Ընդամենը			36	26	8	50	12	16	85	60	185	

Նկար 11. Փոքր քարդր *Charadrius dubius*



Նկար 12. Մոխրագույն շահրիկ *Sylvia communis*



Նկար 13. Սովորական կարմրատուտ *Phoenicurus phoenicurus*



Նկար 14. Սովորական սարյակ *Sturnus vulgaris*



Նկար 15. Սպիտակագլուխ անգղ Gyps fulvus



Տեսակային կազմի համեմատությունը նախորդ տարիների հետ ցույց է տալիս հետևյալը (Աղյուսակ 13)՝

Աղյուսակ 13. Տեսակային կազմի համեմատությունն ըստ տարիների

№	Վայրի անվանումը	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	2014	2015	2016	2017	2018	2024
1		Մեծ ձկնկուկ	Phalacrocorax Carbo	1	0	0	0	0	0
2		Մոխրագույն տառեղ	Ardea cinerea	1	0	0	0	0	0
3		Կրետակեր	Pernis apivorus	1	0	1	1	1	0
4		Գառնանգղ	Gypaetus barbatus	1	0	1	0	0	1
5		Գիշանգղ	Neophron percnopterus	1	1	1	0	1	0
6		Սպիտակագլուխ անգղ	Gyps fulvus	1	1	1	1	1	1
7		Փոքր ենթարծիվ	Aquila pomarina	1	1	1	1	1	0
8		Օձակեր արծիվ	Circaetus gallicus	0	0	0	0	1	0
9		Եվրոպական ճնճղաճուռակ	Accipiter brevipes	0	0	1	0	0	0
10		Լորաճուռակ	Accipiter nisus	1	1	1	1	1	1
11		Ցախաքլորարոս	Accipiter Gentilis	1	0	1	0	1	0
12		Մեծ ճուռակ	Buteo buteo	1	1	1	1	1	1
13		Տափաստանային ճուռակ	Buteo rufinus	1	1	1	1	1	1
14		Քարարծիվ	Aquila chrysaetos	1	1	0	0	0	0
15		Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus	1	1	1	1	1	1
16		Լոր	Coturnix coturnix	1	1	1	1	1	0

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Վայրի անվանումը	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	2014	2015	2016	2017	2018	2024
17		Մոխրագույն բաղ	Anas strepera	0	0	1	0	0	0
18		Կռնչան բաղ	Anas platyrhynchos	0	0	1	1	0	0
19		Մարգահավ	Crex crex	1	1	1	1	1	0
20		Մոխրագույն կաքավ	Perdix perdix	1	1	1	0	1	0
21		Թխակապույտ աղավնի	Columba livia	1	1	1	1	1	0
22		Յոթբալ	Columba oenas	1	1	1	1	0	0
23		Անտառային աղավնի	Columba Palumbus	1	1	1	0	1	1
24		Սովորական տատրակ	Streptopelia turtur	1	1	0	0	0	0
25		Սովորական կկու	Cuculus canorus	1	1	1	1	1	1
26		Ականջավոր բու	Asio otus	1	1	1	1	1	0
27		Բվեճ	Bubo bubo	1	1	1	1	1	0
28		Անտառաբու	Strix aluco	0	0	0	1	0	0
29		Սև մանգաղաթև	Apus apus	1	1	1	1	1	1
30		Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster	1	1	1	1	1	1
31		Յոպոպ	Upupa epops	1	1	1	1	1	1
32		Վիզզուկ	Jynx torquilla	?	?	?	?	1	
33		Սև փայտփոր	Dryocopus martius	0	0	1	1	1	1
34		Կանաչ փայտփոր	Picus viridis	1	1	1	1	1	1
35		Փոքր փայտփոր	Dendrocopos Minor	1	1	1	0	0	1
36		Միջին փայտփոր	Dendrocopos Medius	1	0	0	0	0	1
37		Խայտաբղետ փայտփոր	Dendrocopos Major	1	1	1	1	1	1
38		Անտառային արտույտ	Lullula arborea	1	1	1	1	1	0
39		Դաշտային արտույտ	Alauda arvensis	1	1	1	1	1	0
40		Փոքր արտույտ	Calandrella brachydactyla	?	?	?	?	1	0
41		Ժայռային ծիծեռնակ	Ptyonoprogne Rupestris	1	1	1	1	1	0
42		Առափնյա ծիծեռնակ	Riparia riparia	1	1	0	1	0	1
43		Գյուղական ծիծեռնակ	Hirundo rustica	1	1	1	1	1	0
44		Քաղաքային ծիծեռնակ	Delichon urbica	1	1	1	1	1	1
45		Դեղին խաղտունիկ	Motacilla flava	1	1	1	1	0	0
46		Սպիտակ խաղտունիկ	Motacilla alba	1	1	1	1	1	1

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Վայրի անվանումը	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	2014	2015	2016	2017	2018	2024
47		Լեռնային խաղտունիկ	Motacilla cinerea	1	1	1	1	1	1
48		Ժուլան	Lanius collurio	1	1	1	1	1	1
49		Պիրոլ	Oriolus oriolus	1	1	1	1	1	1
50		Այծկիթ	Caprimulgus Europaeus	1	1	0	1	0	0
51		Ջրաճնճողուկ	Cinclus cinclus	1	1	1	1	1	1
52		Եղնջաթռչնակ	Troglodytes Troglodytes	1	1	1	1	1	1
53		Անտառային նրբագեղիկ	Prunella modularis	1	1	1	1	1	1
54		Արշալուսիկ	Erithacus rubecula	1	1	1	1	1	1
55		Սովորական սոխակ	Luscinia luscinia	1	1	1	1	1	0
56		Սևուկ կարմրատուտ	Phoenicurus ochrurus	0	0	1	1	1	1
57		Սովորական կարմրատուտ	Phoenicurus Phoenicurus	1	1	1	1	1	1
58		Սևագլուխ չքքան	Saxicola torquata	1	1	1	1	1	0
59		Սովորական քարաթռչնակ	Oenanthe Oenanthe	1	1	1	0	1	0
60		Պարող քարաթռչնակ	Oenanthe isabellina	?	?	?	?	1	0
61		Սև կեռնեխ	Turdus merula	1	1	1	1	1	1
62		Երգող կեռնեխ	Turdus philomelos	1	1	1	1	1	1
63		Սոսնձակեռնեխ	Turdus viscivorus	1	0	1	1	1	1
64		Ծնկլտան գեղգեղիկ	Phylloscopus Collybita	1	1	1	1	1	1
65		Սևագլուխ շահրիկ	Sylvia atricapilla	?	?	?	?	1	1
66		Մոխրագույն շահրիկ	Sylvia communis	?	?	?	?	1	1
67		Դեղնագլուխ արքայիկ	Regulus regulus	1	0	1	0	0	0
68		Մոխրագույն ճանճորս	Muscicapa striata	1	1	1	1	1	1
69		Կիսասպիտակա վիզ ճանճորս	Ficedula Semitorquata	1	1	1	1	1	1
70		Փոքր ճանճորս	Aegithalos Caudatus	1	1	1	0	1	1
71		Երկարագի երաշտահավ	Aegithalos Caudatus	1	1	0	1	0	0
72		Սև երաշտահավ	Parus ater	1	1	1	1	1	1
73		Մեծ երաշտահավ	Parus major	1	1	1	1	1	1
74		Երկնագույն երաշտահավ	Parus caeruleus	1	1	1	1	1	1

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Վայրի անվանումը	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	2014	2015	2016	2017	2018	2024
75		Սովորական սիտեղ	Sitta europaea	1	1	1	1	1	1
76		Շայռային փոքր սիտեղ	Sitta neumayer	1	1	1	1	1	
77		Ծվծվիկ	Certia familiaris	0	0	1	0	1	1
78		Կարմրաթև մագլցող	Tichodroma Muraria	1	0	1	1	0	0
79		Սովորական դրախտապան	Emberiza Citrinella	1	1	1	1	0	1
80		Լեռնային դրախտապան	Emberiza cia	1	1	1	1	1	1
81		Ազնվասարեկ	Spinus spinus	1	0	1	1	0	1
82		Ամուրիկ	Fringilla coelebs	1	1	1	1	1	1
83		Կանաչ սերինոս	Carduelis chloris	1	1	1	1	1	1
84		Սովորական խածկտիկ	Pyrrhula pirrhula	1	1	1	1	1	0
85		Չատբեկիչ	Coccothraustes Coccothraustes	1	1	1	1	1	1
86		Կարմրակատար	Carduelis Carduelis	1	1	1	1	1	1
87		Տնային ճնճողկ	Passer domesticus	1	1	1	1	1	1
88		Դաշտային ճնճողկ	Passer montanus	1	1	1	1	1	1
89		Շայռային ճնճողկ	Petronia petronia	0	0	1	1	1	0
90		Սովորական սարյակ	Sturnus vulgaris	1	1	1	1	1	1
91		Անտառային կաչաղակ	Garrulus Glandarius	1	1	1	1	1	1
92		Սովորական կաչաղակ	Pica pica	1	1	1	1	1	1
93		Մոխրագույն ագռավ	Corvus cornix	1	1	1	1	1	1
94		Արջագռավ	Corvux corax	1	1	1	1	1	1
95		Գաճաճ արծիվ	Aquila pennata	0	0	0	0	0	1
96		Սովորական սերինոս	Fringilla montifringilla	0	0	0	0	0	1
97		Կարմրաճակատ սերինոս	Serinus pusillus	0	0	0	0	0	1
98		Կորեկնուկ	Emberiza calandra/ Miliaria calandra	0	0	0	0	0	1
99		Փոքր քարոլր	Charadrius dubius	0	0	0	0	0	1
100		Սևագլուխ դրախտապան	Emberiza melanocephala	0	0	0	0	0	1
101		Սովորական ոսպնուկ	Carpodacus erythrinus	0	0	0	0	0	1
102		Կանաչ գեղգեղիկ	Phylloscopus nitidus	0	0	0	0	0	1

№	Վայրի անվանումը	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	2014	2015	2016	2017	2018	2024
103		Զարակաքավ	Alectoris chukar	0	0	0	0	0	1

3.4 Եզրակացություն

Անտառում ձմեռող թռչունների բազմազանությունը կարծես թե ավելի ցածր է, քան տարածքի ուրբանիզացված հատվածներում: Հայտնաբերված կետերը, ըստ երևույթին, տեղին են տեսակների բազմազանության մշտադիտարկման համար և պետք է հետազոտվեն նաև գարնանը, ամռանը և աշնանը: Բազմազան սեզոնի հետազոտությունները պետք է ներառեն ցերեկային, ինչպես նաև գիշերային հաշվարկներ, հատկապես ուղղված Բվերին և Գիշերայիններին: Չգայուն անտառային մասնագիտացված տեսակներից պետք է նշել Հատբեկիչին *Coccothraustes coccothraustes*: Սև փայտփորի բնադրման վայրի որոնումը պետք է լինի առաջնահերթ:

Դիտարկված տեսակների մեջ առաջնահերթ տեսակներից են ՀՀ Կարմիր Գրքում գրանցված սև փայտփորը *Dryocopus martius* (RDB VU), Սպիտակագլուխ անգղը *Gyps fulvus* (RDB VU), Մորուքավոր անգղը *Gypaetus barbatus* (BDB VU), Գաճաճ արծիվը *Aquila pennata* և Կիսասպիտակավիզ ճանճորսը *Ficedula semitorquata* (RDB DD): Նաև կարևոր է նշել Փոքր քարդրի *Charadrius dubius* անսովոր բնադրումը տարածքում:

Անտառում բնադրող թռչունների բազմազանությունը բավականին մեծ է և ներառում է մի շարք տիպիկ անտառային տեսակներ, որոնք կարող են հանդիսանալ անտառի վիճակի ինդիկատորներ: Դրանք են՝ Արշալուսիկը *Erithacus rubecula*, Սև երաշտահավը *Parus ater*, Փոքր փայտփորը *Dendrocopos minor*, Փոքր ճանճորսը *Ficedula parva*, Երգող կեռնեխը *Turdus philomelos*, Կանաչ գեղգեղիկը *Phylloscopus nitidus*, Սովորական սիտեղը *Sitta europaea* և Հատբեկիչը *Coccothraustes coccothraustes*: Բացի դրանից, ՀՀ Կարմիր Գրքում գրանցված սև փայտփորը *Dryocopus martius* և Կիսասպիտակավիզ ճանճորսը *Ficedula semitorquata* նույնպես հանդիսանում են անտառի վիճակի ինդիկատորներ:

3.5 Գրականություն

Voříšek P, Klvaňová A, Wotton S, Gregory RD (2008) A Best Practice Guide for Wild Bird Monitoring Schemes. Royal Society for the Protection of Birds, Sandy, UK.

4. Սողուններ


4.1 Հետազոտության տարածքը

Աղյուսակ 14. Սողունների նմուշառման վայրերը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Տրանսեկտային	1 կմ տրանսեկտ
TTBR_002	41.08925	44.85104	905	Տրանսեկտային	500 մ տրանսեկտ
TTBR_003	41.10191	44.84219	892	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_004	41.11526	44.82671	840	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ
TTBR_005	41.10824	44.84142	905	Տրանսեկտային	200 մ տրանսեկտ
TTBR_006	41.093611	44.849163	995	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ
TTBR_007	41.090928	44.814514	950	Տրանսեկտային	1 կմ տրանսեկտ

Նկար 16. Սողունների նմուշառման վայրերը



4.2 Մեթոդները

Տվյալների հավաքագրման կետերը բերված են **Աղյուսակ 14**-ում և **Նկար 16**-ում: Բացի այդ, ողջ տարածքում կատարվել են դիտարկումներ ըստ պատահաբար հնարավորությունների, տարածքով անցնելու ընթացքում:

Ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են դաշտային դիտարկումների մեթոդով: Տեսակների նույնականացումը կատարվել է վիզուալ: Ամառային հետազոտություններն իրականացվել են 26.06.2024թ. և 08.08.2024թ. ժամը 9:00-15:00:

Ցերեկային սողունները, որոնք սովորաբար տեսանելի են միայն արևային եղանակին, հայտնաբերվել են և գրանցվել են հետազոտված տրանսեկտների երկայնքով (200 մ մինչև 1 կմ ըստ տեղավայրի) ըստ ստանդարտ մեթոդի (McDiarmid et al, 2012): Մյուս (թաքնված) տեսակների որոնման համար փնտրում էինք պիտանի ապաստարաններ: Գրանցել ենք GPS կետերը, բիոտոպի նկարագրությունը և լանդշաֆտի լուսանկարը: Օգտագործել ենք տեսակների հայերեն անվանումները ըստ «Հայաստանի ողնաշավորներ կենդանիների անվանումների բառարան», Հայրապետյան և այլ, ԵՊՀ հրատարակչություն (2018):

4.3 Արդյունքները

Գարնանն իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է 8 տեսակի 35 առանձնյակ (տես [Աղյուսակ 15-ը](#), ա) և բ):

Աղյուսակ 15. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

ա)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Բծավոր մողես	Lacerta strigata				1	2		04.03.24	
2	Միջին մողես	Lacerta media						3	04.03.24	
3	Հայկական մողես	Darevskia armeniaca						2	04.03.24	
Ընդամենը			0	0	0	2	2	3		

բ)

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Բծավոր մողես	Lacerta strigata				2	3	7	11.06.24	
2	Միջին մողես	Lacerta media		1		1	1	9	11.06.24	
3	Դեղնափորիկը	Pseudopus apodus				1			11.06.24	
	Ջրային լորսուռ	Natrix tessellata						1	11.06.24	
4	Բազմազույն սահնօձ	Hammerhois ravergieri						1	11.06.24	
5	Սովորական պղնձօձ	Coronella austriaca			1				11.06.24	
6	Հայկական մողես	Darevskia armeniaca				3	2	7	11.06.24	
Ընդամենը			0	1	1	6	9	18		

Ամբողջ օրը 26.06.2024թ.-ին եղանակը եղել է անձրևոտ և ցուրտ, ինչի պատճառով մակերեսին սողունների հանդիպելու հնարավորություն չկար: Անգամ ապաստարանները դատարկ էին:

08.08.2024թ. ժամը 9:00-ից 15:00-ն արևային շատ լավ եղանակ էր՝ միջինը 26°C: Սակայն ժամը 13:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում ջերմաստիճանը շատ բարձր է դարձել սողունների համար, և նրանց հանդիպելու հավանականությունը եղել է միայն ստվերային վայրերում կամ ապաստարաններում: Արդյունքում հայտնաբերվել են սողունների 4 տեսակի 27 առանձնյակ ([Աղյուսակ 16](#)):

Աղյուսակ 16. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5,6,7 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Դալի ժայռային մողես	Darevskia dahli	1	1	1	1			17	2	08.08.24	600 մ տրանսեկտ

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
2	Մարգագետնային մողես	Darevskia praticola							1		08.08.24	600 մ տրանսեկտ
3	Կանաչ մողեսների ցեղից (հավանաբար ճարպիկ մողես)	Lacerta sp. (agilis)							1		08.08.24	600 մ տրանսեկտ
4	Սովորական լորտու	Natrix natrix							1		08.08.24	600 մ տրանսեկտ
5	Ձիթագույն սահսօձ	Platyceps najadum						1			08.08.24	300 մ տրանսեկտ
Ընդամենը			1	1	1	1	0	1	20	2		

Ներկայացված տեսակներից երկուսը (տես [Նկար 17-ը](#) և [Նկար 18-ը](#)) գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (RDB) և Բնության պահպանության միջազգային միությունը ցուցակում (IUCN)՝ Դալի ժայռային մողես *Darevskia dahli* (RDB - VU, IUCN - NT) և մարգագետնային մողես *Darevskia praticola* (RDB - VU, IUCN - NT):

Նկար 17. Դալի ժայռային մողես *Darevskia dahli*



Նկար 18. Մարգագետնային մողես *Darevskia praticola*



Նկար 19. Սովորական լորսուկ *Natrix natrix*



Նկար 20. Ձիթագույն սահնօձ *Platyceps najadum*



4.4 Եզրակացություն

Անտառից ազատվող միջավայրը նպաստում է սողունների զարգացմանը: Անտառին խիստ բնորոշ է մեկ տեսակ՝ Սովորական պղնձօձը *Coronella austriaca*:

Թեղուտ գյուղի շրջակայքի անտառային լանդշաֆտները սողուններով հարուստ չեն, քանի որ այնտեղ կլիման ավելի քիչ հարմար է նրանց համար (Arakelyan et al, 2011): Սողունների տարածված տեսակներից են ժայռային մողեսները (կուսածին՝ *Darevskia dahli*, *D.armeniaca* և երկսեր *D.portschinskii*, *D.praticola*): Իլիկամողեսը *Anguis colchica* այս բնակավայրին բնորոշ սողուն է, թեև մեզ չի հանդիպել:

Օձերը հիմնականում ավելի քիչ են տեսանելի: Ամենատարածվածը այս վայրում պղնձօձն *Coronella austriaca* է, որին հաջորդում են տարագույն սահնօձ *Hemorrhois ravergeri*-ն, Ուրարտի սահնօձ *Elaphe urartica*-ը և ձիտագույն սահնօձ *Platyceps najadum*-ը: Երկու տեսակի լորտուններ (սովորական՝ *Natrix natrix* և ջրային՝ *N. tessellata*), գրեթե միշտ երևում են ջրի մոտ: Հնարավոր է հանդիպել նաև Կովկասյան կատված *Telescopus fallax*-ին (RDB - VU) և անդրկովկասյան սահնօձ *Zamenis hohenackeri*-ին:

Սողուններից ամենախոցելի տեսակն է միջերկրածովյան կրիան (*Testudo graeca*), որը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության ցուցակում (IUCN) որպես խոցելի (VU) տեսակ: Թեղուտ գյուղի շրջակայքը այս տեսակի հիմնական տարածման վայրերից է: Չնայած նրան, որ մենք չենք հանդիպել կրիային, նրանց տարածման հավանականությունը այստեղ մեծ է և այն գտնվում է ամենամեծ ճնշման տակ:

4.5 Գրականություն

1. Arakelyan M., Danielyan F., Corti C., Sindaco R., Leviton A. (2011) *Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh*. Salt Lake City SSAR, USA.
2. McDiarmid, R. W., Foster, M. S., Guyer, C., Gibbons, J. W., & Chernoff, N. (Eds.). (2012). *Reptile biodiversity: standard methods for inventory and monitoring*. Univ of California Press.
3. Հայրապետյան Տ., Ասլանյան Ա., Պապով Գ, Ղազարյան Ա., (2018) *Հայաստանիողնաշավորների կենդանիների անվանատվմների բառարան*, ԵՊՀ հրատարակչություն.


5. Երկկենցաղներ

5.1 Հետազոտության տարածքը

Աղյուսակ 17. Երկկենցաղների նմուշառման վայրերը

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն / Latitude	Երկայնություն / Longitude	Բարձրություն / Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Տրանսեկտային	1 կմ տրանսեկտ
TTBR_002	41.08925	44.85104	905	Տրանսեկտային	500 մ տրանսեկտ
TTBR_003	41.10191	44.84219	892	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ
TTBR_004	41.11526	44.82671	840	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ
TTBR_005	41.10824	44.84142	905	Տրանսեկտային	200 մ տրանսեկտ
TTBR_006	41.093611	44.849163	995	Տրանսեկտային	400 մ տրանսեկտ
TTBR_007	41.090928	44.814514	950	Տրանսեկտային	1 կմ տրանսեկտ

Նկար 21. Երկենցաղների նմուշառման վայրերը



5.2 Մեթոդները

Տվյալների հավաքագրման կետերը բերված են [Աղյուսակ 17](#)-ում և [Նկար 21](#)-ում: Բացի այդ, ողջ տարածքում կատարվել են դիտարկումներ ըստ պատահաբար հնարավորությունների, տարածքով անցնելու ընթացքում: Ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են դաշտային դիտարկումների մեթոդով: Տեսակների նույնականացումը կատարվել է վիզուալ և ակուստիկ մեթոդներով: Երկկենցաղների հետազոտությունների համար օգտագործվել է ստանդարտ մեթոդաբանություն (Fellers and Gary, 1995): Երկկենցաղներին հաշվարկել ենք միայն ցերեկվա ընթացքում ինչպես ցամաքային, այնպես էլ ջրային միջավայրերում տրանսեկտների երկայնքով (200 մ մինչև 1 կմ ըստ տեղավայրի): Դոդոշների որոնման համար փնտրում էինք պիտանի ապաստարաններ: Գրանցել ենք GPS կետերը, բիոտոպի նկարագրությունը և լանդշաֆտի լուսանկարը:

5.3 Արդյունքները

Երկկենցաղների տեսակների վերաբերյալ ստացված տարբեր սեզոնների տվյալները ներկայացված են ստորև [Աղյուսակ 18](#)-ում (կրկնօրինակել Excel-ից)։

Գարնանն իրականացված աշխատանքների արդյունքում արձանագրվել է 4 տեսակի 17 առանձնյակ (տես [Աղյուսակ 18](#)-ը):

Աղյուսակ 18. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Լճագորտ	<i>Pelophylax ridibundus</i>						3	11.06.24	

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
2	Անդրկովկասյան գորտ	<i>Rana macrocnemis</i>						5	11.06.24	
3	Կանաչ դոդոշ	<i>Bufo variabilis</i>						1	11.06.24	
4	Ծառագորտ	<i>Hyla orientalis</i>	5	3					11.06.24	
Ընդամենը			5	0	3	0	0	9		

Նկար 22. Լճագորտ *Pelophylax ridibundus*



Ամառային հետազոտություններն իրականացվել են 26.07.2024թ.-ին և 08.08.2024թ.-ին:

26.07.2024թ.-ին ոչ մի երկկենցաղ չենք հանդիպել անձրևոտ եղանակի պատճառով:

08.08.2024թ. ժամը 9:00-ից 15:00-ն հանդիպել ենք երկկենցաղներին հիմնականում ջրային միջավայրում: Արդյունքում հայտնաբերվել են երկկենցաղների 3 տեսակի 57 առանձնյակ (**Աղյուսակ 19**):

Աղյուսակ 19. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5,6,7 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին: 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

№	Տեսակի անվանումը հայերեն	Տեսակի անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվը	Մեկնաբանություն
1	Կանաչ դոդոշ	<i>Bufo viridis</i>						1 Էգ	8 ոչ սեռահասուն		08.08.24	300 մ տրանսեկտ
2	Փոքրասիական գորտ	<i>Rana macrocnemis</i>							2 ոչ սեռահասուն		08.08.24	300 մ տրանսեկտ
3	Լճագորտ	<i>Pelophylax ridibundus</i>	1	1					38 ոչ սեռահասուն	6	08.08.24	300 մ տրանսեկտ
Ընդամենը			1	1	0	0	0	1	48	6		

08.08.2024թ.-ին ջրում առկա էին շերեփուկներ և ոչ սեռահասուն առանձնյակներ:

Նկար 18. Կանաչ դոդոշ *Bufo viridis*



5.4 Եզրակացություն

Չորս երկկենցաղների տեսակներ կարող են հանդիպել ողջ տարածքում, որտեղ կա ջուր՝ կանաչ դոդոշ *Bufo viridis*, լճագորտ *Pelophylax ridibundus*, Փոքրասիական գորտ *Rana macrocnemis* և սովորական ծարագորտ *Hyla orientalis* (Arakelyan et al, 2011): Չորրորդ տեսակը՝ սովորական ծարագորտը (*Hyla orientalis*), նույնպես տարածված տեսակ է, բայց չի հանդիպել այս արշավի ժամանակ: Ուսումնասիրված տարածքում կան մի քանի ջրամբարներ, որոնք ծառայում են այս տեսակների ձվադրման և զարգացման վայրեր:

5.5 Գրականություն

1. Arakelyan M., Danielyan F., Corti C., Sindaco R., Leviton A. Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh, Salt Lake City SSAR, USA, 2011.
2. Fellers, Gary M. A standardized protocol for surveying aquatic amphibians. No. 58. National Biological Service, Cooperative Park Studies Unit, University of California, Division of Environmental Studies, 1995.

6. Բույսերը

6.1 Յտուագոտության տարածքը

Թեղուտի հանքավայրի տարածքը գտնվում է Հայաստանի Լոռու մարզում: Ըստ Հայաստանի Ֆլորիստիկ շրջանների բաժանման (Taxтаджян, 1954) այն ներառված է Իջևանի Ֆլորիստիկ շրջանի մեջ: Հանքավայրի տարածքում բուսականության տիպերից հանդիպում են անտառներ՝ կաղնու-բոխու, հաճարկուտներ, խառը անտառներ, նոսրանտառ: Տարածքում հանդիպում է նաև շիբլյակ: Գետափերը և ջրամբարի ափերը ներկայացված են ջրածահմային բուսականությամբ: Տարածքում կան խախտված աճելավայրեր, որտեղ բուսականությունը կամ բացակայում է, կամ տարածքները գրավում են էքսպանսիվ և ինվազիվ բուսատեսակները:

Աղյուսակ 20. Բույսերի նմուշառման վայրերը գարնանային հետազոտությունների ընթացքում

Կետի ծածկագիրը/ Point Code	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	41.10089	44.83513	1,091	Դիտարկում	Մշտական աճող
TTBR_002	41.08925	44.85104	905	Դիտարկում	Մշտական աճող
TTBR_003	41.10191	44.84219	892	Դիտարկում	Մշտական աճող
TTBR_004	41.11526	44.82671	840	Դիտարկում	Մշտական աճող
TTBR_005	41.10824	44.84142	905	Դիտարկում	Մշտական աճող

Աղյուսակ 21. Բույսերի նմուշառման վայրերը գարնանային հետազոտությունների ընթացքում

Կետի ծածկագիրը/ Point Code	Բույսերի տվյալներ/ Plants Data	Լայնություն/ Latitude	Երկայնություն/ Longitude	Բարձրություն/ Elevation	Ուսումնասիրման տեսակը/ Type of survey	Կիրառելիությունը/ Applicability
TTBR_001	1	41.10089	44.83513	1,091		
TTBR_002	2	41.08925	44.85104	905		
TTBR_003	3	41.10191	44.84219	892		
TTBR_004	4	41.11526	44.82671	840		
TTBR_005	5	41.10824	44.84142	905		
TTBR_006	6	41.09361	44.84916	1,001		
TTBR_007	7	41.09093	44.81451	995		
Other	0					

6.2 Մեթոդները

Գարնանային հետազոտությունների ընթացքում տվյալների հավաքագրման կետերը նշված են **Աղյուսակ 20**-ում: Բացի այդ, ողջ տարածքում կատարվել են դիտարկումներ ըստ պատահաբար հնարավորությունների, տարածքով անցնելու ընթացքում: Ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են դաշտային դիտարկումների մեթոդով: Տեսակների նույնականացումը կատարվել է վիզուալ մեթոդով:

Ամառային դաշտային հետազոտությունը կատարվել է երկրահետազոտության դասական եղանակով՝ երթուղային և կիսաստացիոնար: Տրվել է բուսականության նկարագրությունը: Յտուագոտության ընթացքում կատարվել են հանդիպող բուսատեսակների գրանցում և թվային լուսանկարում: Այն բուսատեսակները, որոնք հնարավոր չէր տեղում որոշելու, լաբորատոր

պայմաններում նույնականացվել են 33 ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի Բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնում: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է Հայաստանի ֆլորայի 11 հատորներով (Флора Армении, 1954-2010): Ուսումնասիրվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն, դաշտից վերցված նմուշները համեմատվել են 33 ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի բուսապահոցում (ERE) առկա բուսանմուշների հետ: Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի Կարմիր Գրքի (2010):

Ուսումնասիրությունների համար նախատեսված են եղել 7 կետեր: Նկարագրվել են այդ կետերի հարևանությամբ բուսական համակեցությունները, նույնականացվել տեսակները: Պայմանականորեն այդ կետերին տրվել են անվանումներ:

1. Անտառ (41.10089; 44.83513; 1,091 մ ծ.մ.բ.)



Հաճարկուտ է, գերակշռում է *Fagus orientalis*-ը, հանդիպում են նաև առանձնյակներով *Carpinus betulus*, *Acer campestre*, *Quercus iberica* և այլն:

2. Բաց հանք (41.08925; 44.85104; 905 մ ծ.մ.բ.)



Բաց հանքից արևելյան հատվածում կաղնու-բոխու անտառ է *Quercus iberica*-ի և *Carpinus betulus*-ի մասնակցությամբ: Հանդիպում են նաև *Carpinus orientalis*, *Acer platanoides*, *Populus tremula*, *Swida australis*, *Corylus avellana*, *Salix excelsa*: Անտառի եզրին հանդիպում են *Rubus anatolicus*, *Rosa canina* և այլ բուսատեսակներ: Անտառամիջյան ճանապարհին բազմաթիվ առանձնյակներով հանդիպում է Ռոբինիա կեղծ ակացիան, որը լինելով ինվազիվ տեսակ, արագ լրացնում է ծառահատումներից առաջացած բաց տարածքները: Բաց հանքի հարևանությամբ շատ են խախտված աճելավայրերը՝ կապված իրագործվող աշխատանքների հետ: Ճանապարհաեզրին շատ են նաև ինվազիվ *Ailanthus altissima*-ի առանձնյակները, որոնք հիմնականում հանդիպում են խմբերով:

3. Ճանապարհ / ենթակայան (41.10191; 44.84219; 892 մ ծ.մ.բ.)



Խառը անտառ է *Quercus iberica*, *Carpinus betulus*, *Fagus orientalis* և *Pinus kochii* մասնակցությամբ: Հանդիպում են նաև *Corylus avellana*, *Viburnum lantana*, *Sambucus ebulus*:


4. Պոչամբար (41.11526; 44.82671; 840 մ ծ.մ.բ.)



Տարածքում հանդիպում է շիրյակի հատված, ուր գերակշռում է *Paliurus spina-christi*, բուսականության կազմում հանդիպում են *Rosa canina*, *Corylus avellana*, *Juglans regia*, *Fraxinus excelsior*, *Eunymus europaeus*, *Swida australis*, *Crataegus pentagyna*. Խոտածածկը հարուստ է չորասեր բույսերով: Պոչամբարի պատվարի վրա առատորեն աճում է *Chenopodium botrys*:



5. Մատուռ (41.10824; 44.84142; 905 մ ծ.մ.բ.)



Մատուռից հարավ-արևելք տարածքի մի հատվածը շիբլյակ է՝ *Paliurus spina-christi*-ի մասնակցությամբ: Այստեղ հանդիպում են նաև *Rosa canina*, *Rubus anatolicus*: Դեպի հյուսիս և հյուսիս արևելք կաղնու-բոխու անտառաշերտ է, ուր *Quercus iberica* և *Carpinus betulus*-ից հանդիպում են նաև *Celtis caucasica*, *Crataegus pentagyna*, *Fraxinus excelsior* և այլն:

6. Պահեստ (41.09361; 44.84916; 1,001 մ ծ.մ.բ.)



Այս տարածքում կատարված աշխատանքների շնորհիվ շատ հատվածներ բուսազուրկ են: Տարածքի հյուսիս և հյուսիս-արևմուտքում կաղնու-բոխու անտառներ են *Quercus iberica* և *Carpinus betulus*-ի մասնակցությամբ: Հանդիպում են նաև *Acer campestre*, *Crataegus rhipidophylla*, *Crataegus pentagyna*, *Fraxinus excelsior* և այլն:

7. Ջրամբար (41.09093; 44.81451; 995 մ ծ.մ.բ.)



Ջրամբարը գտնվում է Խառատագետի ձորակում, որի երկու լանջերը ներկայացված են կաղնու-բոխու անտառներով՝ *Quercus iberica*-ի և *Carpinus betulus*-ի մասնակցությամբ: Հանդիպում են նաև *Prunus divaricata*, *Celtis caucasica*, *Fraxinus excelsior*, *Corylus avellana*, *Acer campestre* և այլն: Խախտված հատվածներում՝ ճանապարհաեզրերին, լանջերին աճում են *Rosa canina*, *Rubus anatolicus*: Ափամերձ հատվածում հանդիպում են *Populus nigra*, *Populus tremula*, *Salix caprea* և այլն: Տարածքում կան բետոնե ջրանցքեր: Գետի աջ ափին ջրանցքի հարևանությամբ կա *Ambrosia artemisifolia*-ի մեծ պոպուլացիա մոտ 35 մ² մակերեսով:

Օ. Այլ

Այստեղ գրանցված են այն բուսատեսակները, որոնք նկատվել են տարածքում, բայց չեն հանդիպել վերը նշված կետերում:

6.3 Արդյունքները

Գարնանային հետազոտությունների ընթացքում արձանագրվել է 31 տեսակ (տես [Աղյուսակ 22-ը](#)):

Աղյուսակ 22. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005 վայրերին; O համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

№	Լատինական անվանումը	1	2	3	4	5	O	Ամսաթիվ	Մեկնաբանություն
1	<i>Ambrosia artemisiifolia</i>			x	x	x	x	11.06.24	
2	<i>Artemisia armeniaca</i>				x		x	11.06.24	
3	<i>Crepis pulchra</i>				x	x	x	11.06.24	
4	<i>Thaenatherum crinitum</i>					x	x	11.06.24	
5	<i>Phleum phleoides</i>			x	x		x	11.06.24	
6	<i>Rubus anatolicus</i>		x	x	x	x	x	11.06.24	
7	<i>Bupleurum pauciradiatum</i>			x		x	x	11.06.24	
8	<i>Conyza canadensis</i>			x	x	x	x	11.06.24	
9	<i>Ailanthus altissima</i>				x		x	11.06.24	
10	<i>Fagus orientalis</i>	x	x					11.06.24	
11	<i>Carpinus betulus</i>	x	x	x			x	11.06.24	
12	<i>Viburnum lantana</i>	x	x	x			x	11.06.24	
13	<i>Berberis orientalis</i>	x	x	x			x	11.06.24	
14	<i>Dryopteris filix-mas</i>	x	x	x			x	11.06.24	
15	<i>Asplenium scolopndrium</i>	x	x	x			x	11.06.24	
16	<i>Poa nemoralis</i>			x	x	x	x	11.06.24	
17	<i>Urtica dioica</i>			x		x	x	11.06.24	
18	<i>Arctium palladinii</i>		x	x			x	11.06.24	
19	<i>Crepis pulchra</i>		x				x	11.06.24	
20	<i>Epilobium montanum</i>		x				x	11.06.24	
21	<i>Dipsacus globosus</i>		x				x	11.06.24	
22	<i>Impatiens noli-tangere</i>		x				x	11.06.24	
23	<i>Epilobium hirsutum</i>						x	11.06.24	
24	<i>Lamium album</i>						x	11.06.24	
25	<i>Acer campestre</i>		x					11.06.24	
26	<i>Euphorbia condylocarpa</i>						x	11.06.24	
27	<i>Polygonatum glaberrimum</i>						x	11.06.24	
28	<i>Quercus iberica</i>	x	x	x			x	11.06.24	
29	<i>Medicago sativa</i>		x				x	11.06.24	
30	<i>Sambucus ebulus</i>		x	x			x	11.06.24	
31	<i>Crataegus caucasica</i>				x		z	11.06.24	

Նկար 19. *Silene compacta*



Նկար 20. *Tussilago farfara*



Նկար 21. Leucantemum vulgare



Ամառային հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են հետևյալ տեսակները՝

Աղյուսակ 25. Դիտարկված տեսակները, 1,2,3,4,5,6,7 համապատասխանում է TTBR_001, TTBR_002, TTBR_003, TTBR_004, TTBR_005, TTBR_006, TTBR_007 վայրերին; 0 համապատասխանում է մնացած բոլոր վայրերին, որտեղ դիտարկումները արվել են ըստ պատահաբար հնարավորությանը

ա)

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
1	Թխկի դաշտային	<i>Acer campestre L.</i>				+	+	+			26.07.24	
2	Թխկի սրատերև	<i>Acer platanoides L.</i>									26.07.24	
3	Կտուկենի խոտային	<i>Sambucus ebulus L.</i>				+		+			26.07.24	
4	Աստղաբույս ամենամեծ	<i>Astrantia maxima Pall.</i>				+					26.07.24	
5	Աստղազազար արևելյան	<i>Astrodaucus orientalis (L.)Drude</i>				+	+	+			26.07.24	
6	Օշինդր սովորական	<i>Artemisia vulgaris L.</i>				+	+	+			26.07.24	
7	Ճարճատուկ սովորական	<i>Cichorium intybus L.</i>				+	+	+			26.07.24	
8	Տատասկ պարուրված	<i>Cirsium obvallatum</i>				+	+	+			26.07.24	
9	Հազարատերևուկ Բիբերշտեյնի	<i>Achillea biebersteinii Afan.</i>						+			26.07.24	
10	Հազարատերևուկ ասպիրակի	<i>Achillea filipendulina Lam.</i>					+				26.07.24	
11	Անթեմ կրետական	<i>Anthemis cretica L</i>									26.07.24	

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ավարտական հաշվետվություն (2024 թվական)

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
12	Կղմուխ մեծ	<i>Inula helenium L.</i>				+					26.07.24	
13	Տատասկափուշ խոնարհված	<i>Carduus nutans L.</i>				+	+				26.07.24	
14	Տերեփուկ ուռատերև	<i>Centaurea salicifolia L.</i>				+					26.07.24	
15	Ճարճատուկ սվորական	<i>Cichorium intybus L.</i>				+		+			26.07.24	
16	Տատասկ պարուրված	<i>Cirsium obvallatum</i>						+			26.07.24	
17	Կաթնուկ կողմնացույց	<i>Lactuca serriola L</i>				+	+	+			26.07.24	
18	Խատուտիկ բեսարաբական	<i>Taraxacum bessarabicum (Hornem.) Hand.-Mazz.</i>					+				26.07.24	
19	Իժախոտ ռուսաստանյան	<i>Echium russicum Gmel.</i>				+	+	+			26.07.24	
20	Իլենի եվրոպական	<i>Euonymus europaeus L.</i>				+					26.07.24	
21	Յոն սվորական	<i>Cornus mas L.</i>								+	26.07.24	
22	Ճապկի հարավային	<i>Swida australis (C.A.Mey.) Pojark.</i>				+	+	+			26.07.24	
23	Բոխի սվորական	<i>Carpinus betulus L</i>									26.07.24	
24	Բոխի արևելյան	<i>Carpinus orientalis Mill.</i>				+	+	+			26.07.24	
25	Տխլենի սվորական	<i>Corylus avellane L.</i>				+					26.07.24	
26	Քոպրոսուկ կրկնափետրածև	<i>Scabiosa bipinnata K.Koch</i>				+	+				26.07.24	
27	Եղջերառվույտ կովկասյան	<i>Lotus caucasicus Kuprian.</i>					+	+			26.07.24	
28	Առվույտ գայլուկանման	<i>Medicago lupulina L.</i>						+			26.07.24	
29	Առվույտ ցանովի	<i>Medicago sativa L</i>									26.07.24	
30	Իշառվույտ դեղատու	<i>Mellilotus officinalis (L.) Pall.</i>				+	+				26.07.24	
31	Երեքնուկ մարգագետնային	<i>Trifolium pretense L.</i>				+					26.07.24	
32	Վիկ ցանովի	<i>Vicia sativa L.</i>									26.07.24	
33	Կաղնի վրացական	<i>Quercus iberica Stev.</i>				+	+	+			26.07.24	
34	Ճայկտուղց հայկական	<i>Erodium armenum (Trautv.) Woronow</i>				+					26.07.24	
35	Սրոհունդ խոցված	<i>Hypericum perforatum L.</i>						+			26.07.24	
36	Ընկուզենի սվորական	<i>Juglans regia L.</i>				+					26.07.24	
37	Խնկածաղիկ սվորական	<i>Origanum vulgare L.</i>				+	+	+			26.07.24	
38	Եղեսպակ օղակածև	<i>Salvia verticillate L.</i>					+	+			26.07.24	
39	Տուղտավարդ կնճռոտ	<i>Alcea rugosa Alef.</i>				+					26.07.24	
40	Փիփերթ անտառային	<i>Malva sylvestris L.</i>								+	26.07.24	
41	Հացենի բարձր	<i>Fraxinus excelsior L</i>				+					26.07.24	
42	Ապուզան թավոտ	<i>Epilobium hirsutum L.</i>									26.07.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
43	Եզան լեզու մեծ	<i>Plantago major L.</i>				+		+			26.07.24	
44	Ոգնախոտ հավաքված	<i>Dactilis glomerata L.</i>					+				26.07.24	
45	Դաշտավլուկ կաղնուտային	<i>Poa nemoralis L.</i>									26.07.24	
46	Խոզանուկ գորշ	<i>Setaria glauca (L.) Beauv.</i>				+	+				26.07.24	
47	Մատիտեղ ճնճողուկի	<i>Polygonum aviculare L.</i>						+			26.07.24	
48	Ցաքի փշոտ	<i>Paliurus spina-christi Mill.</i>					+				26.07.24	
49	Դժնիկ քաղցր	<i>Rhamnus pallasii Fisch. et Mey.</i>									26.07.24	
50	Սզկի հովաքատերև	<i>Crataegus rhipidophylla Gand.</i>					+	+			26.07.24	
51	Սզկի հինգասունակ	<i>Crataegus pentagyna Waldst. et Kit.</i>				+	+				26.07.24	
52	Երեսնակ սովորական	<i>Agrimonia eupatoria L.</i>				+	+	+			26.07.24	
53	Խնձորենի արևելյան	<i>Malus orientalis Uglitzk.</i>								+	26.07.24	
54	Մարտնի շան	<i>Rosa canina L.</i>				+	+	+			26.07.24	
55	Մոշենի անատոլիական	<i>Rubus anatolicus Fock.</i>				+	+	+			26.07.24	
56	Ուռենի բարձր	<i>Salix excelsa S.G.Gmel.</i>		+		+					26.07.24	
57	Փռշնի կովկասյան	<i>Celtis caucasica Willd.</i>					+				26.07.24	
58	Ռոբինիա կեղծ ակացիա	<i>Robinaia pseudoacacia L.</i>								+	26.07.24	Ինվազիվ
59	Եղինջ երկտուն	<i>Urtica dioica L.</i>				+	+	+			26.07.24	
60	Երկնածառ Այլանթ բարձրաբուն	<i>Ailanthus altissima Swingle</i>		+								Ինվազիվ

b)

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
1	Թխկի դաշտային	<i>Acer campestre L.</i>	+	+	+	+	+	+	+		08.08.24	
2	Թխկի վրացական	<i>Acer ibericum M.Bieb.</i>					+		+		08.08.24	
3	Թխկի սրատերև	<i>Acer platanoides L.</i>	+			+			+		08.08.24	
4	Կտտկենի խոտային	<i>Sambucus ebulus L.</i>			+	+	+	+	+		08.08.24	
5	Սոխ տարօրինակ	<i>Allium paradoxum(M.Bieb.) G.Don</i>	+								08.08.24	
6	Սոխ կարմրիկ	<i>Allium rubellum M.Bieb</i>								+	08.08.24	
7	Ձնծաղիկ Արտյուշենսկոյի	<i>Galanthus artjuschenkoae Gabrielian</i>	+								08.08.24	VU
8	Կերթելուկ կաղնուտային	<i>Anthriscus sylvestris (L.) Hoffm</i>	+		+	+					08.08.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
9	Աստղաբույս ամենամեծ	<i>Astrantia maxima</i> Pall.	+		+	+					08.08.24	
10	Աստղազազար արևելյան	<i>Astrodaucus orientalis</i> (L.)Drude	+	+		+	+	+			08.08.24	
11	Եզևակող պարսկական	<i>Bupleurum persicum</i> Boiss.			+	+	+				08.08.24	
12	Շուշանբանջար սոխուկավոր	<i>Chaerophyllum bulbosum</i> L.					+		+		08.08.24	
13	Գազար վայրի	<i>Daucus carota</i> L.		+	+	+	+	+	+		08.08.24	
14	Ենջևակ Բիլյարդեի	<i>Eryngium billardieri</i> Delaroche	+		+	+	+	+	+		08.08.24	
15	Սիբեխ սովորական	<i>Falcaria vulgaris</i> Bernh.			+	+	+	+			08.08.24	
16	Քեղի Սոսնովսկու	<i>Heracleum sosnowskyi</i> Manden.								+	08.08.24	
17	Ուրո դաշտային	<i>Torilis arvensis</i> (Huds.) Link.			+		+				08.08.24	
18	Կուսածաղիկ խոտային	<i>Vinca herbacea</i> Waldst. et Kit.	+								08.08.24	
19	Հազարատերևուկ Բիբերշտեյնի	<i>Achillea biebersteinii</i> Afan.					+		+		08.08.24	
20	Հազարատերևուկ ասպիրակի	<i>Achillea filipendulina</i> Lam.	+		+	+			+		08.08.24	
21	Հազարատերևուկ սովորական	<i>Achillea millefolium</i> L.								+	08.08.24	
22	Ամբրոսիա օշինդրատերև	<i>Ambrosia artemisifolia</i> L.							+		08.08.24	հնվագիվ
23	Անթեմ կրեստական	<i>Anthemis cretica</i> L.	+			+					08.08.24	
24	Անթեմ Տրիումֆեյտիի	<i>Anthemis triumfettii</i> (L.)All.	+						+		08.08.24	
25	Կռատուկ Պալադիևի	<i>Arctium palladini</i> (Marc.) Grossh.	+	+		+	+	+			08.08.24	
26	Օշինդր դառը	<i>Artemisia absinthium</i> L.		+			+				08.08.24	
27	Օշինդր սովորական	<i>Artemisia vulgaris</i> L.			+	+	+	+	+		08.08.24	
28	Տատասկափուռ խոնարիված	<i>Carduus nutans</i> L.			+	+	+				08.08.24	
29	Տերեփուկ ուռատերև	<i>Centaurea salicifolia</i> L.			+	+		+			08.08.24	
30	Ճարճատուկ սովորական	<i>Cichorium intybus</i> L.		+		+	+	+	+		08.08.24	
31	Տատասկ թարթիչավոր	<i>Cirsium ciliatum</i> (Murray) Moench			+	+					08.08.24	
32	Տատասկ պարուրված	<i>Cirsium obvallatum</i>		+		+	+				08.08.24	
33	Չամբյուղախոտ սիբիրյան	<i>Crepis sibirica</i> L.				+	+		+		08.08.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
34	Ռզնագլխիկ անդրկովկասյան	<i>Echinops transcaucasicum Iljin</i>		+		+	+	+	+		08.08.24	
35	Գարնանաթարմ կծու	<i>Erigeron acer L.</i>		+							08.08.24	
36	Ճուռակախոտ մազմզոտ	<i>Hieracium pilosella L.</i>		+	+			+			08.08.24	
37	Ճուռակախոտ հովանացավոր	<i>Hieracium umbellatum Vill.</i>				+	+		+		08.08.24	
38	Կղմուխ մեծ	<i>Inula helenium L.</i>				+					08.08.24	
39	Կաթնուկ կողմնացույց	<i>Lactuca serriola L.</i>		+	+	+	+				08.08.24	
40	Սպիտակածաղիկ սովորական	<i>Leucanthemum vulgare Lam.</i>	+			+					08.08.24	
41	Չալկորուկ գարնանային	<i>Senecio vernalis Waldst. et Kit.</i>			+	+					08.08.24	
42	Լվածաղիկ կուսատերև	<i>Tanacetum parthenium (L.) Sch.Bip</i>	+		+					+	08.08.24	
43	Լվածաղիկ կետավոր	<i>Tanacetum punctatum (L.) Sch.Bip</i>		+							08.08.24	
44	Խատուտիկ բեսարաբական	<i>Taraxacum bessarabicum (Hornem.) Hand.-Mazz.</i>			+	+				+	08.08.24	
45	Տատրակ սովորական	<i>Tussilago farfara L.</i>		+	+	+	+	+			08.08.24	
46	Դառնուկ իտալական	<i>Xanthium italicum Moretti.</i>		+	+	+					08.08.24	
47	Ամմեռուկ չռված	<i>Xeranthemum squarrosum Boiss.</i>			+		+	+			08.08.24	
48	Կավաժիպակ դաշտային	<i>Anchusa arvensis (L.) M.Bieb.</i>			+						08.08.24	
49	Իժախոտ ռուսաստանյան	<i>Echium russicum Gmel.</i>			+		+	+	+		08.08.24	
50	Քարխոտ կոշտ	<i>Symphytum asperum Lepech.</i>				+					08.08.24	
51	Դեսկուրենիա Սոֆիայի	<i>Descurainia sophia (L.) Webb.</i>						+	+		08.08.24	
52	Ծաղկատուկ կոշտ	<i>Asyneuma rigidum (Willd.) Grossh.</i>		+							08.08.24	
53	Չանգակ Ստևենի	<i>Campanula stevenii M.Bieb.</i>	+	+						+	08.08.24	
54	Գայլուկ սովորական	<i>Humulus lupulus L.</i>			+				+		08.08.24	
55	Ցախակեռաս վրացական	<i>Lonicera iberica M.Bieb.</i>	+		+	+					08.08.24	
56	Սապնարմատ նրբագեղ	<i>Gypsophylla elegans M.Bieb.</i>							+		08.08.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
57	Ճվծվուկ սեցնված	<i>Silene compacta</i> <i>Fisch.</i>				+					08.08.24	
58	Աստղիկ սովորական	<i>Stelaria media</i> (L.) <i>C.Presl.</i>	+								08.08.24	
59	Իլենի եվրոպական	<i>Euonymus europaeus</i> <i>L.</i>				+					08.08.24	
60	Թելուկ հոտավետ	<i>Chenopodium botrys</i> <i>L.</i>		+		+					08.08.24	
61	Թելուկ բազմատերև	<i>Chenopodium foliosum</i> <i>L.</i>			+	+				+	08.08.24	
62	Տիպատատուկ անտառային	<i>Calystegia sylvatica</i> <i>(Kit.) Griseb.</i>				+				+	08.08.24	
63	Պատատուկ դաշտային	<i>Convolvulus arvensis</i> <i>L.</i>	+	+		+	+	+	+		08.08.24	
64	Յոն սովորական	<i>Cornus mas</i> <i>L.</i>								+	08.08.24	
65	Ճապկի հարավային	<i>Swida australis</i> <i>(C.A.Mey.) Pojark.</i>				+				+	08.08.24	
66	Բոխի սովորական	<i>Carpinus betulus</i> <i>L.</i>	+	+	+		+		+		08.08.24	
67	Բոխի արևելյան	<i>Carpinus orientalis</i> <i>Mill.</i>	+	+		+		+	+		08.08.24	
68	Տիլենի սովորական	<i>Corylus avellane</i> <i>L.</i>		+	+	+		+			08.08.24	
69	Թանթռնիկ կովկասյան	<i>Sedum caucasicum</i> <i>(Grossh.) Bor.</i>								+	08.08.24	
70	Թանթռնիկ բարակ	<i>Sedum gracile</i> <i>C.A.Mey.</i>								+	08.08.24	
71	Բոշխ սուր	<i>Carex acuta</i> <i>L.</i>		+							08.08.24	
72	Բոշխ կարճամազ	<i>Carex hirta</i> <i>L.</i>								+	08.08.24	
73	Վնքաբույս հասարակ	<i>Tamus communis</i> <i>L.</i>						+	+		08.08.24	
74	Չիվան հսկայական	<i>Cephalaria gigantea</i> <i>(Ledeb.) Bobr.</i>				+				+	08.08.24	
75	Քոսքոսուկ կրկնափետրածև	<i>Scabiosa bipinnata</i> <i>K.Koch</i>		+		+		+			08.08.24	
76	Պոտեր արական	<i>Dryopteris filix-mas</i> <i>(L.) Schott</i>		+							08.08.24	
77	Քարառվույտ երփներանգ	<i>Coronilla varia</i> <i>L.</i>	+	+		+			+		08.08.24	
78	Եղջերառվույտ կովկասյան	<i>Lotus caucasicus</i> <i>Kuprian.</i>				+	+		+		08.08.24	
79	Առվույտ գայլուկանման	<i>Medicago lupulina</i> <i>L.</i>		+			+	+			08.08.24	
80	Առվույտ ցանովի	<i>Medicago sativa</i> <i>L.</i>		+	+	+		+	+		08.08.24	
81	Իշառվույտ դեղատու	<i>Melilotus officinalis</i> <i>(L.) Pall.</i>		+	+	+		+	+		08.08.24	
82	Երեքնուկ մարգագետնային	<i>Trifolium pretense</i> <i>L.</i>	+			+			+		08.08.24	
83	Վիկ ցանովի	<i>Vicia sativa</i> <i>L.</i>		+		+					08.08.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
84	Կաղնի վրացական	<i>Quercus iberica</i> Stev.	+	+	+	+	+	+	+		08.08.24	
85	Ճայկտուց հայկական	<i>Erodium armenum</i> (Trautv.) Woronow	+			+		+	+		08.08.24	
86	Խորդենի Ռոբերտի	<i>Geranium robertianum</i> L.	+								08.08.24	
87	Սրոհունդ խոցված	<i>Hypericum perforatum</i> L.	+	+		+			+		08.08.24	
88	Ընկուզենի սովորական	<i>Juglans regia</i> L.			+	+				+	08.08.24	
89	Ռեհանաուրց վայրի	<i>Clinopodium umbrosum</i> (M.Bieb.) K.Koch	+						+		08.08.24	
90	Խուլ եղինջ ցողունազխիկ	<i>Lamium amplexicaule</i> L.	+	+							08.08.24	
91	Դաղձ երկարատերև	<i>Mentha londifolia</i> (L.) L.		+					+		08.08.24	
92	Կատվադաղձ Մուսինիի	<i>Nepeta mussinii</i> Spreng.			+		+				08.08.24	
93	Խնկածաղիկ սովորական	<i>Origanum vulgare</i> L.	+	+		+	+	+	+		08.08.24	
94	Եղեսպակ կաչուն	<i>Salvia glutinosa</i> L.	+	+					+		08.08.24	
95	Եղեսպակ օղակածև	<i>Salvia verticillate</i> L.		+		+	+		+		08.08.24	
96	Ուրց անդրկովկասյան	<i>Thymus transcaucasicus</i> Ronn.				+				+	08.08.24	
97	Տուղտավարդ կնճռոտ	<i>Alcea rugosa</i> Alef.				+				+	08.08.24	
98	Փիփերթ անտառային	<i>Malva sylvestris</i> L.		+		+					08.08.24	
99	Հացենի բարձր	<i>Fraxinus excelsior</i> L.	+	+	+	+		+	+		08.08.24	
100	Ապուզան թավոտ	<i>Epilobium hirsutum</i> L.		+					+		08.08.24	
101	Սոճի Կոխի	<i>Pinus kochiana</i> Klotzsch			+						08.08.24	
102	Եզան լեզու նշտարածև	<i>Plantago lanceolate</i> L.		+		+			+		08.08.24	
103	Եզան լեզու մեծ	<i>Plantago major</i> L.	+	+	+				+		08.08.24	
104	Ոգնախոտ հավաքված	<i>Dactylis glomerata</i> L.	+	+		+	+	+	+		08.08.24	
105	Էլիտրիգիա միջին	<i>Elytrigia intermedia</i> (Host) Nevski		+		+			+		08.08.24	
106	Շյուղախոտ մարգագետնային	<i>Festuca pratensis</i> Huds.		+	+						08.08.24	
107	Բարակոտնուկ սանրանման	<i>Koeleria cristata</i> (L.) Pers.	+			+			+		08.08.24	
108	Սիզախոտ մարգագետնային	<i>Phleum pratense</i> L.	+			+					08.08.24	
109	Եղեգ հյուսիսային	<i>Phragmites australis</i> (Cav.) Trin.							+		08.08.24	

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
110	Դաշտավունկ պալարածև	<i>Poa bulbosa L.</i>	+	+		+		+	+		08.08.24	
111	Դաշտավունկ կաղնուտային	<i>Poa nemoralis L.</i>		+			+		+		08.08.24	
112	Խոզանուկ գորշ	<i>Setaria glauca (L.) Beauv.</i>		+		+	+	+	+		08.08.24	
113	Մատիստեղ ճնճղուկի	<i>Polygonum aviculare L.</i>	+								08.08.24	
114	Մատիստեղ ջրային	<i>Polygonum hydropiper L.</i>							+		08.08.24	
115	Ավելունկ սովորական	<i>Rumex acetosa L.</i>		+	+	+	+	+	+		08.08.24	
116	Չնարբունկ խոշորաբաժակ	<i>Primula macrocalyx Bunge</i>	+								08.08.24	
117	Ոջլախոտ արևելյան	<i>Consolida orientalis (J.Gay.) Schroding</i>		+					+		08.08.24	
118	Ցաքի փշոտ	<i>Paliurus spina-christi Mill.</i>				+	+				08.08.24	
119	Դժնիկ քաղցր	<i>Rhamnus pallasii Fisch. et Mey.</i>				+					08.08.24	
120	Սզնի հովիարատերև	<i>Crataegus rhipidophylla Gand.</i>				+	+	+	+		08.08.24	
121	Սզնի հինգասունակ	<i>Crataegus pentagyna Waldst. et Kit.</i>				+	+				08.08.24	
122	Երեսնակ սովորական	<i>Agrimonia eupatoria L.</i>	+	+	+	+	+	+	+		08.08.24	
123	Խնձորենի արևելյան	<i>Malus orientalis Uglitzk.</i>								+	08.08.24	
124	Մասրենի շան	<i>Rosa canina L.</i>		+		+	+	+	+		08.08.24	
125	Մոշենի անատոլիական	<i>Rubus anatolicus Fock.</i>	+	+	+	+		+	+		08.08.24	
126	Գետնաստղ գետնատարած	<i>Asperula prostrata (Adams.) K.Koch</i>		+					+		08.08.24	
127	Մակարդախոտ կաչուն	<i>Galium aparine</i>	+		+						08.08.24	
128	Բարդի սև	<i>Populus nigra L.</i>		+					+		08.08.24	
129	Բարդի դողդոջուն	<i>Populus tremula L.</i>		+					+		08.08.24	
130	Ուռենի բարձր	<i>Salix excelsa S.G.Gmel.</i>		+		+		+	+		08.08.24	
131	Արջընկույզ սովորական	<i>Datura stramonium L.</i>		+							08.08.24	
132	Լորենի կովկասյան	<i>Tilia caucasica Rupr.</i>	+		+						08.08.24	
133	Փռչնի կովկասյան	<i>Celtis caucasica Willd.</i>					+		+		08.08.24	
134	Եղինջ երկտուն	<i>Urtica dioica L.</i>	+	+	+	+			+		08.08.24	
135	Տատաշ փռվող	<i>Tribulus terrestris L.</i>								+	08.08.24	
136	Ռոբինիա կեղծ ակացիա	<i>Robinia pseudoacacia L.</i>		+		+					08.08.24	Ինվազիվ

№	Անվանումը հայերեն	Անվանումը լատիներեն	1	2	3	4	5	6	7	0	Ամսաթիվ	Մեկնաբանություն
137	Կոնիգա կանադական	<i>Conyza canadensis (L.) Cronquist</i>		+	+			+	+		08.08.24	Ինվազիվ
138	Գերիմաստի	<i>Viburnum lantana L.</i>	+	+	+						08.08.24	
139	Ջաճարենին արևելյան	<i>Fagus orientalis Lipski</i>	+	+	+						08.08.24	
140	Կտուկենի սև	<i>Sambucus nigra L.</i>								+	08.08.24	
141	Իժախոտ իտալական	<i>Echium italicum L.</i>		+					+		08.08.24	
142	Թեղի Էլիպսաձև	<i>Ulmus glabra Huds.</i>							+		08.08.24	
143	Շլորենի	<i>Prunus divaricate Ledeb.</i>									08.08.24	
144	Երկնածառ Այլանթ բարձրաբուն	<i>Ailanthus altissima Swingle</i>		+							08.08.24	Ինվազիվ

Նկար 22. Կոմուլա մեծ (*Inula helenium*)



Նկար 23. Կնքաբույս հասարակ (*Tamus communis*)



Նկար 24. Մատիտեղ ջրային (*Polygonum hydropiper*)



Նկար 25. Լորենի կովկասյան (*Tilia caucasica*)



Նկար 26. Իլենի եվրոպական (*Euonymus europaeus*)



Նկար 27. Թխկի դաշտային (*Acer campestre*)



6.4 Եզրակացություններ

Անտառին հատուկ բնորոշ տեսակներից են՝ *Fagus orientalis*, *Carpinus betulus*, *Viburnum lantana*, *Berberis orientalis*, *Dryopteris filix-mas* և *Asplenium scolopendrium*:

Ինվազիվ տեսակներից են՝ *Ambrosia artemisiifolia* և *Ailanthus altissima*-ն:

Տարածքում շատ են խախտված աճելավայրերը, քանի որ հանքը գործող է, լանդշաֆտների փոփոխությունները, նոր ճանապարհների բացումը բերում են բույսերի աճելավայրերի կրճատման: Խախտված աճելավայրերում էքսպանսիվ բուսատեսակները զբաղեցնում են մեծ տարածքներ: Կարելի է հանդիպել ճանապարհատեղիներին՝ *Artemisia vulgare*, *Conyza canadensis*, *Amaranthus retroflexus*, *Plantago lanceolate*, *Cichorium intybus*, *Tussilago farfara*, *Echium italicum* և այլն: Հանդիպում են նաև ինվազիվ բուսատեսակներ: Առավել ազդեցիկ է *Ailanthus altissima*-ն, որը ներխուժում է նաև նոսրանտառներ, հանդիպում է անտառամիջյան ճանապարհներին:

Որպեսզի կարողանանք պահպանել արդեն իսկ տուժած տեղական ֆլորան, անհրաժեշտ են ինվազիվ բուսատեսակների դեմ պայքարի միջոցառումներ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ անտառային հատվածներում կա ծառատեսակների՝ կաղնու, բոխու, թխկու, հաճարենու սերմնային վերած:

Նկար 28. Դենդրոֆլորայի ներկայացուցիչների սերմնային վերած



Բուսաբանական հետազոտությունների ընթացքում տարածքի անտառային հատվածից (TTBR_001) հայտնաբերվել է իջևանի ֆլորիստական շրջանի համար նոր բուսատեսակ՝ Բերենիկե դեղատու (*Veronica officinalis* L.) (Plantaginaceae):

“Armenia, marz Tavush, near v. Teghut, forest. 41°05'51''N; 44°49'50,7''E, 1110 m; 08.08.2024, leg. and det. M. Sargsyan. ERE 202408; ERE 202409”.

Նկար 29. Բերենիկե դեղատու



Տարածքում հանդիպում են տարատեսակ սնկեր, որոնց նույնականացման համար լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք կա:



6.5 Գրականություն

1. Բալոյան Ս. Հայաստանի ալպիական բուսական ծածկույթը: Երևան, 2005, 224 էջ:
2. Գալստյան Ս.Ռ., Եսկանյան Գ. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և անտառները: WWF Հայաստան, 2012, 52 էջ:
3. Հայաստանի հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման եվ վերարտադրության ռազմավարություն եվ գործողությունների պետական ծրագիր: ՀՀ Բնապահպանության նախարարություն: Երևան, 2015:
4. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, Հինգերորդ ազգային զեկույց: Երևան, 2014թ.
5. Կենսաբանական բազմազանություն: Ուղեցույց (խմբ. Ն. Խանջյան), Երևան, 2004, 88 էջ:
6. Հայաստանի հանրապետության բույսերի և կենդանիների կարմիր գիրք: Երկրորդ հրատարակություն, Երևան 2010.
7. Ղազարյան Ռ. Ս. Բուսատուների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան: - Երևան, 1981: - 180 էջ:
8. Магакян А. К. Растительность Армянской ССР. – М.- Л., 1941. - 276 с.:
9. Флора Армении (ред. А. Л. Тахтаджян), «Академия наук Арм ССР», Ереван т.т. 1 - 8, 1954 – 1987; т.т. 9 –11, Koeltz Scientific Books, Germany, 1995 - 2010:
10. Watson G. M. , French K. O. , Burley A. L. , Brading M. B. , Hamilton M.A. 2021. Monitoring Manual for Invasive and Native Flora: Guidance for field monitoring and reporting, NSW Department of Planning, Industry and Environment, Sydney.